



# ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ:

ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ  
13 -ՐԴ ՀՈՂՎԱԾ



ՀՈՂՎԱԾՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ  
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ  
ԵՎ ՈՆՏԱՆԵՎԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ  
ԴՐԱ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ԿԵՐԱԲԵՐՑԱԼ

COUNCIL OF EUROPE



CONSEIL DE L'EUROPE

ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ  
ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ .  
ՍՏԱՄԲՈՒԼԻ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 13-ՐԴ  
ՀՈԴՎԱԾ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ  
ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱՆԱՆՑ ՆԿԱՏՄԱՍԲ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԵՎ  
ԸՆՏԱՆԵԿԱՆ ԲՈՒՆՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐԻ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կարին Հայսեքե

Եվրոպայի խորհուրդ

Ֆրանսերեն հրատարակություն .

*Sensibilisation à la violence à  
l'égard des femmes :  
Article 13 de la Convention d'Istanbul*

Այս աշխատությունում  
արտահայտված կարծիքների  
պատասխանատվությունը կրում են  
դրա հեղինակները և կարող են  
չհամընկնել Եվրոպայի խորհրդի  
պաշտոնական քաղաքականության  
հետ:

Այս փաստաթուղթն ամբողջությամբ  
կամ հատվածաբար կրկնօրինակելու  
համար բոլոր դիմումները պետք է  
հասցեագրել Կապի տնօրինություն  
( F - 67075 Strasbourg Cedex կամ  
publishing@coe.int): Այս  
փաստաթղթի հետ առնչվող ողջ այլ  
նամակագրությունը պետք է  
հասցեագրել Ժողովրդավարության  
հարցերով գլխավոր տնօրինության  
Հավասարության հարցերի բաժին:

Այս փաստաթղթում հիշատակված բոլոր  
վեբկայքերի հասցեները վերջին անգամ  
հասանելի են եղել 2014թ ապրիլի 4-ին:

Կազմը և ձևավորումը՝ SPDP  
Եվրոպայի խորհուրդ

© Եվրոպայի խորհուրդ, 2014թ սեպտեմբեր  
Տպագրվել է Եվրոպայի խորհրդում

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

---

13 - ԲԴ ՀՈԴՎԱԾԻ ԱՌԱՐԿԱՆ  
ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԴԵՐԸ  
ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ինչ զիտենք մենք իրազեկության բարձրացման և  
կանխարգելման մասին  
Սահմանումներ

ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐՇԱՎՆԵՐԻ ԿԱՍ  
ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ և ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ինչից սկսել  
Ուղերձների և լսարանների ընտրությունը  
Ուղերձները հաղորդելու միջոցները և ԶԼՄ-ները

## ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՍՏՈՒԳԱԹԵՐԹ ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ  
ԱՐՇԱՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ

## ՀԻՄՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Իրազեկության բարձրացման արշավները և  
նախաձեռնությունները Եվրոպայում  
Կանանց նկատմամբ բռնության մասին  
հաղորդակցական ուղեցույցներ

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

## Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**Կ**անանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության դեմ պայքարի տարբեր ձևերի մասին իրազեկության բարձրացումը կարևոր մաս է կազմում կանանց նկատմամբ բռնությունը կանխելու գործում, քանի որ լավ իրազեկված լինելն առաջին քայլն է կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը հավերժացնող կամ արդարացնող վերաբերմունքը և վարքը փոխելու համար: Այս նպատակով Եվրոպայի խորհրդի Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին կոնվենցիան<sup>1</sup> (այսուհետ՝ «Ստամբուլի կոնվենցիա») դիմում է մասնակից պետություններին իրականացնելու իրազեկության բարձրացման լայնածավալ նախաձեռնություններ՝ որպես կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելուն նպատակաուղղված մի շարք լուրջ միջոցառումների բաղկացուցիչ մաս (Հոդված 13): Այս հոդվածի նպատակն է իրազեկության բարձրացման միջոցով ավելի շատ տվյալներ տրամադրել կանխարգելման մասին և գործնական խորհուրդներ առաջարկել քաղաքականություն և ծրագրեր մշակողներին և իրականացողներին իրազեկության բարձրացման արշավների վերաբերյալ: Եվրոպայի խորհրդի մասնակից

---

<sup>1</sup> Եվրոպայի խորհուրդ (2011թ), Եվրոպայի խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին, Բացատրական զեկույց, Եվրոպայի խորհրդի հրատարակչություն, Ստրասբուրգ, հասանելի է [www.coe.int/t/dghl/standardsetting/equality/03themes/violence-against-women/Exp-memo-Conv-VAW-en.pdf](http://www.coe.int/t/dghl/standardsetting/equality/03themes/violence-against-women/Exp-memo-Conv-VAW-en.pdf).

պետություններում ավելի վաղ իրականացված իրազեկության բարձրացման արշավների համառոտ նկարագրությունները ոգևորություն են ներշնչում և ի մի են բերվում իրազեկության բարձրացման արշավների մասին պատմող ստուգաթերթում:

## 13 -ՐԴ ՀՈՂՎԱԾԻ ԱՌԱՐԿԱՆ

---

Հողված 13-ի նպատակն է հանրության շրջանում բարձրացնել իրազեկության աստիճանը կանանց նկատմամբ բռնության մասին, որին նրանք ենթարկվում են և թե ինչու է այն հանդիսանում գենդերային հիմքով բռնություն: Այն նաև նպատակ է հետապնդում ապահովել, որպեսզի ընտանեկան բռնությունն իր բոլոր դրսևորումներով հանդերձ ավելի խորությամբ ընկալվի հանրության բոլոր անդամների կողմից: Դա նշանակում է, որ պետք է միջոցներ ձեռնարկվեն, որպեսզի հայտնի դառնա, որ կանանց նկատմամբ բռնության ձևեր գոյություն ունեն, ինչպիսին են օրինակ՝ ընտանեկան բռնությունը (հոգեբանական, ֆիզիկական և սեռական բռնությունը), հետապնդումը, սեռական բռնությունը (ներառյալ բռնաբարությունը), հարկադիր ամուսնությունը, կանացի սեռական օրգանների խեղումը, ստիպողական ստերիլիզացիան, հարկադրված աբորտները և սեռական ոտնձգությունը, և առաջարկեն, թե ինչ կարող են անել անհատները դա կանխելու կամ ռիսկի գոտում գտնվող կանանց և աղջիկներին օգնելու համար: Դա նաև նշանակում է, որ ընտանեկան բռնությանը վերաբերող թեմայում որևէ տաբու չպետք է լինի, որ այն մասնավոր խնդիր չէ և որ ընտանեկան բռնությունը տարածվում է սոցիալական բոլոր շերտերի ընտանիքների վրա: Գենդերային հիմքով ընտանեկան բռնությանը, որպես գուրընկերոջ կողմից կատարվող բռնության ենթատեքստում տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ բռնություն, պետք է տրվի նույնքան կարևորություն, որքանով որ այն ազդում է երեխաների

վրա: Քանի որ մասնակից պետությունների համար պարտադիր չէ կիրառել կոնվենցիան ընտանեկան բռնության բոլոր գոհերի նկատմամբ (երեխաների նկատմամբ դաժան վերաբերմունքի, տարեցների նկատմամբ դաժան վերաբերմունքի, զուգընկերոջ կողմից բռնության գոհ դարձած անձանց նկատմամբ), յուրաքանչյուր մասնակից պետություն ինքն է որոշում բռնության նման ձևերի նկատմամբ իրազեկության բարձրացման աստիճանը:

**Հոդված 13 - Իրազեկության բարձրացում**

(1) Մասնակից պետությունները պետք է կանոնավոր հիմունքներով խթանեն կամ կազմակերպեն հանրային իրազեկման արշավների կամ ծրագրերի անցկացումը, այդ թվում, համապատասխան դեպքերում՝ համագործակցելով մարդու իրավունքների ներպետական ինստիտուտների և հավասարության հարցերով լիազոր մարմինների, քաղաքացիական հասարակության և ՀԿ-ների, հատկապես կանանց հարցերով զբաղվող կազմակերպությունների հետ՝ սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր ձևերի, երեխաների վրա դրանց ազդեցության և նման բռնությունը կանխելու անհրաժեշտության մասին ընդհանուր հասարակության իրազեկության և ընկալման մակարդակը բարձրացնելու նպատակով:

(2) Մասնակից պետությունները պետք է ապահովեն, որպեսզի սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության գործողությունները կանխելու առկա միջոցների մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվի ընդհանուր հասարակության շրջանում:



Ստամբուլի կոնվենցիային վերաբերող բացատրական գեկույցում տրվում է 13-րդ հոդվածի համաձայն ստանձնած պարտավորությունների բնույթի ավելի մանրամասն բացատրությունը: Դրանց շարքում իրազեկության բարձրացման քայլերին վերաբերող հիմնական պարտավորությունները հետևյալներն են, որոնք պետք է.

- կանոնավոր կերպով կիրառվեն, վերաբերվելով դրանց որպես շարունակական և երկարատև գործընթացի, այլ ոչ մեկանգամյա միջոցի,
- ծրագրված լինեն այնպես, որ հանրության բոլոր անդամներին օգնեն ճանաչելու կանանց նկատմամբ բռնությունը, բարձրաձայնելու դրա դեմ և աջակցելու դրանց գոհերին,
- խնդրին անդրադառնան ցուցաբերելով գենդերային զգայուն մոտեցում, ներառյալ կանանց և տղամարդկանց միջև հավասարությանը և կարծրատիպերից զերծ գենդերային դերերին և ընդհարումների, առանց բռնության, կարգավորմանը վերաբերող տեղեկատվությունը,
- լուսաբանեն երեխաների համար վնասակար (ուղղակի կամ անուղղակի) հետևանքները,
- համագործակցեն քաղաքացիական հասարակության և համապատասխան փորձառություն ունեցող այլ գործընկերների հետ (մասնավորապես կանանց ՀԿ-ների, որոնք մասնագիտացել են կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու հարցերում):

Այնուհետև, Հոդված 13-ն իր 2-րդ մասում դիմում է մասնակից պետություններին ապահովելու համար, որպեսզի հանրությունը տեղեկացված լինի բռնության դեպքերը կանխելու հասանելի միջոցառումների մասին:

Բացատրական զեկույցը պարզաբանում է, որ դա նշանակում է տեղեկատվական բուկլետների, պաստառների կամ այլ առցանց տեղեկատվական նյութերի լայն տարածում ոստիկանության, թեժ գծերի, ապաստարանների կամ պետական, տարածքային կամ տեղական զոհերին օգնություն և աջակցություն ցուցաբերող որևէ մի այլ կազմակերպության կողմից տրամադրվող ծառայությունների մասին:

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության բոլոր ձևերի մասին իրազեկությունը բարձրացնելու պարտավորությունը կազմում է Կոնվենցիայի III Գլխում<sup>2</sup> պարունակած կանխարգելմանը վերաբերող պարտավորությունների շրջանակի մի մասը: Հետևաբար, այն պետք է դիտարկվի այդ դրույթների հետ ունեցած սերտ կապի մեջ, որտեղ շարադրված են կարծրատիպերին և նախապաշարմունքներին մարտահրավեր նետող մի շարք ընդհանուր պարտավորություններ, ներառում են տղամարդկանց և տղաներին, և ընդլայնում կանանց իրավունքները (Հոդված 12), նպատակ ունենալով խթանել գենդերային հավասարությունը և կարծրատիպերից զերծ գենդերային դերերը կրթության ոլորտում (Հոդված 14), վերապատրաստել մասնագետներ (Հոդված 15), աշխատանք տանել հանցագործների հետ (Հոդված 16) և ներգրավել լրատվամիջոցներն ու մասնավոր հատվածը կանխարգելման համար գործադրվող ջանքերում (Հոդված

---

<sup>2</sup> Ստամբուլի կոնվենցիայի <<in use>> շարքը կազմված է հոդվածներից, որոնք վերաբերում են Կոնվենցիայի III Գլխում առկա կանխարգելումների ոլորտի պարտավորություններին: Տես, մասնավորապես՝ Hester M. and Lilley S.J. ( 2014 ), Preventing violence against women: Article 12 of the Istanbul Convention, Council of Europe Publishing, Strasbourg.

17):

Կանխարգելիչ միջոցառումները կոնվենցիայի անքակտելի մասն են կազմում՝ զոհերին պաշտպանելու և աջակցելու մանրամասն պարտավորություններով հագեցած, զոհերի համար ապահովելով արդյունավետ հետաքննություն և դատական հետապնդում կանանց նկատմամբ բռնության գործերի առնչությամբ և ապահովելով այդ պարտավորությունների փոխակերպումը համապարփակ և համակարգված քաղաքականության, որ պետք է իրականացվի բոլոր համապատասխան գործող անձանց արդյունավետ համագործակցության միջոցով (Հոդված 7): Բացի այդ, Հոդված 11-ը պահանջում է ջանքեր գործադրել տվյալների հավաքագրման համար և հետազոտություններ կատարել կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի վերաբերյալ, որպեսզի հետագայում վարվող քաղաքականությունը և միջոցառումները կարողանան հիմնվել գիտելիքների ամուր բազայի վրա:

Հենց նման լայն համատեքստում է պետք դիտարկել իրազեկության բարձրացման և գոյություն ունեցող ծառայությունների մասին հանրությանը տեղեկացնելու պարտավորությունը: Այն կարող է լինել մի փոքր մասը միայն այն ամբողջական ջանքերի, որոնք ուղղված են կանանց նկատմամբ բռնության կանխարգելմանը և խստորեն փոխկապակցված են այլ կանխարգելիչ միջոցառումների հետ, որոնք պետք է իրականացվեն՝ որպես համապարփակ քաղաքականության փաթեթի մաս՝ հիմնված հետազոտությունների և տվյալների բազայի բացահայտած ապացույցների վրա:

## Իրազեկության բարձրացման դերը կանխարգելման գործում

Ստամբուլի կոնվենցիան հստակորեն հաստատում է, որ կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու համար անհրաժեշտ է փոխել ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց վերաբերմունքը և վարքը, ովքեր հաճախ գտնվում են նախապաշարմունքների, գենդերային կարծրատիպերի և գենդերային հիմքով կողմնակալ սովորույթների և ավանդույթների ազդեցության տակ (Հոդված 12): Կանանց նկատմամբ բռնության մասին խիստ կենսունակ առասպելների և թյուրըմբռումների և առնականության և կանացիության վերաբերյալ կարծր հասկացությունների մեջ փոփոխություններ մտցնելը այս համատեքստի առանցքային միջոցառումներից է:

Կանխելու համար կանանց նկատմամբ բռնությունը և ընտանեկան բռնությունը, նրանք, ովքեր ծրագրում են իրազեկության բարձրացման միջոցառումներ, պետք է հասկանան, թե ինչու են նման բռնությունները տեղ գտնում: Ստամբուլի կոնվենցիան միացել է կանանց նկատմամբ բռնության մասին Միավորված ազգերի CEDAW Կոմիտեի կողմից մշակված ըմբռումներին, մասնավորապես նրա Ընդհանուր հանձնարարական 19(1992)-ում շարադրված մտքերին և կանանց նկատմամբ բռնության պատճառը տեսնում է արմատացած գենդերային անհավասարության մեջ: Ստամբուլի կոնվենցիայի Նախաբանում ճանաչում է

գտել այն միտքը, որ «կանանց նկատմամբ բռնությունը, դա՛ կանանց և տղամարդկանց միջև պատմականորեն ձևավորված անհավասարության դրսևորում է, ինչը հանգեցրել է կանանց նկատմամբ տղամարդկանց գերակայության և խտրական վերաբերմունքի»>>: Գլխավորն այն է, որ կանանց նկատմամբ բռնության նման ընկալումը հիմնված է այն հասկացության վրա, որ բռնությունը սոցիալական երևույթ է: Այն ստեղծվել, վերարտադրվել և կայունացել է հասարակական կարգի ներսում և սոցիալական գործելակերպի և նորմերի միջոցով: Տղամարդիկ, ովքեր բռնություն են կիրառում «բնությունից» դաժան չեն, նրանք դարձել են դաժան սոցիալականացման և սոցիալական փոխազդեցության արդյունքում և նրանք կարող են, այդ իսկ պատճառով, փոխել իրենց վարքը: Մա նշանակում է, որ կանանց նկատմամբ բռնությունը կարելի է կանխարգելել, եթե միջոցառումներն ուղղված լինեն այն գործոնների դեմ, որոնք առաջացնում են կամ նպաստում դրանց:

Տղամարդկանց կողմից կանանց նկատմամբ բռնության կիրառման բացատրությունները ծնունդ են առել գիտության մի շարք ճյուղերից, որոնք հետազայում, ի թիվս այլոց, զարկ են տվել կենսաբանական, հոգեբանական, հոգեվերլուծական, սոցիոլոգիական, քաղաքական և տնտեսական տեսությունների զարգացմանը: Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լայնորեն կիրառվող «բնապահպանական մոդելը» համախմբեց տարբեր հայեցակարգային մոտեցումներ և բազմաթիվ գործոններ, որոնք հետազոտությունների արդյունքում կանխատեսում են չարաշահումները<sup>3</sup>: Այդ գործոնները խմբավորվում են

---

<sup>3</sup> Heise L.L. ( 1998 ), ,, Violence against women: an integrated, ecological framework

հետևյալ մակարդակներում. հասարակական կարգի մակարդակում (մակրո), առօրյա կյանքը կարգավորող սոցիալական նորմերի և գործելակերպի (մեսո), մոտակա շրջակայքում ամենօրյա փոխգործակցության (միկրո) և անձնական կյանքի պատմության (օնտոգենետիկ): Հազեման - Ուայթը և ուրիշները (2010թ) այս ամենը զարգացրել են ինտերակտիվ մոդելի՝ ցույց տալու համար, թե ինչպես են այս տարբեր ռիսկային գործոնները հատվում տարբեր մակարդակներում, ձևավորելով տարբեր ուղիներ, որոնք բերում են գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնության<sup>4</sup>: Այս ինտերակտիվ մոդելը որպես օգտակար շրջանակ ծառայում է կանխարգելման ռազմավարություն մշակելու համար, քանի որ կարևորում է այն համատեքստերը, որոնք նպաստում են իրավախախտում կատարելուն և որոնք, հետևաբար, պետք է դադարեցվեն կանանց նկատմամբ բռնության արդյունավետ

---

„, Violence Against Women 1998 vol. 4, No 3, pp. 262 - 290.

<sup>4</sup> Hagemann - White C. et al. ( 2010 ), Factors at play in the perpetration of violence against women, violence against children and sexual orientation violence - A multi - level interactive model ( Իրագործելիության հետազոտության մաս՝ գնահատելու համար կարողությունները, հնարավորությունները և կարիքները, համապատասխանեցնելու համար ազգային օրենսդրությունը գենդերային հիմքով բռնության և երեխաների նկատմամբ բռնության մասով Եվրոպական հանձնաժողովի առաջարկություններին ), Եվրոպական միության հրատարակությունների գրասենյակ, Լյուքսենբուրգ, հասանելի է՝ [http://ec.europa.eu/justice/funding/daphne3/multi-level\\_interactive\\_model/understanding\\_perpetration\\_start\\_unix.html](http://ec.europa.eu/justice/funding/daphne3/multi-level_interactive_model/understanding_perpetration_start_unix.html).

Տես նաև՝ Cerise S ( 2011 ), „, A different world is possible: a call for long - term and targeted action to prevent violence against women and girls „, End Violence Against Women ( EVAW ) Coalition, London, pp. 18 - 19, հասանելի է՝ [www.endviolenceagainstawomen.org.uk/data/files/resources/19/a\\_different\\_world\\_is\\_possible\\_report\\_email\\_verson.pdf](http://www.endviolenceagainstawomen.org.uk/data/files/resources/19/a_different_world_is_possible_report_email_verson.pdf).

կանխարգելման համար<sup>5</sup>: Իդեալական տարբերակում, իրազեկության բարձրացման միջոցառումները պետք է նպաստեն բոլոր մակարդակներում այս ուղիների և համատեքստերի քայքայմանը՝ գենդերային հիմքով բռնությունների արդյունավետ կանխարգելման համար: Այնուհանդերձ, կարևոր է ունենալ հստակ և իրատեսական պատկերացում այն դերի մասին, որ իրազեկության բարձրացումը և կարող է, և չի կարող խաղալ կանխարգելման համատեքստում:

---

<sup>5</sup> Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման համար առաջարկվող ծրագրված միջոցառումների տեսական շրջանակի ավելի մանրամասն վերլուծության համար տես Hester M. and Lilley S.J. (2014), Preventing violence against women: Article 12 of the Istanbul Convention, Council of Europe, Strasbourg.

## Ինչ գիտենք մենք իրազեկության բարձրացման և կանխարգելման մասին

Երբ քննարկում ենք իրազեկության բարձրացման առանձնահատուկ դերը որպես կանխարգելման մի մաս, կարևոր է հաշվի առնել և գիտակցել այն տարբերությունը, որ կա մի կողմից իրազեկության մեջ փոփոխությունների և գիտելիքների մակարդակի բարձրացման և մյուս կողմից վերաբերմունքի և վարքի մեջ կատարվող փոփոխությունների միջև: Իրազեկությանը հասկացվող մեծ ուշադրությունը վերաբերմունքի և վարքի մեջ փոփոխությունների նախագուշակն է և կարող է իր ավանդը ներդնել բարենպաստ պայմանների ստեղծման մեջ՝ քաղաքականության փոփոխության և իրականացման համար: Սակայն չի կարելի ենթադրել, թե իրազեկության և գիտելիքների բարձր մակարդակը ինքնին կհանգեցնի կանանց նկատմամբ բռնության հանդեպ վերաբերմունքի փոփոխության: Ավելին, վերաբերմունքի փոփոխությունը, որը վերջին հաշվով նպատակ է հետապնդելու փոխել վարքը, պահանջում է հետագա քայլեր կրթության բնագավառում և ավելի խորը, երկարաժամկետ պարտավորություն: Հետևաբար, իրազեկության բարձրացումը պետք է ընկալվի որպես այն համապարփակ միջոցառումների մի կարևոր մաս, որն ուղղված է կանանց նկատմամբ բռնության դեմ ի պատասխան և այն կանխելու կարողությունների բարելավման:

Հարկ է նաև նշել, որ ծրագրերի համակարգի վերաբերյալ գիտելիքների ներկա բազան, կանխարգելման և իրազեկության բարձրացման և այն բանի միջև, թե ինչպես են այդ միջոցառումները նպաստում կանանց նկատմամբ



բռնություն իրականացնելու ուղիների վերացմանը, սահմանափակ է: Կառավարության կողմից տրամադրվող աջակցության ավելացումը հետագա հետազոտությունների և գնահատման համար, ինչն առաջարկվում է Մտամբուլի կոնվենցիայի կողմից, հնարավորություն կընձեռի ավելացնելու փաստերի վրա հիմնված միջամտությունները կանխարգելման ոլորտում՝ ներառելով իրազեկության բարձրացումը:

2005 թվականից սկսած, Եվրոպայի խորհուրդը մշտադիտարկման է ենթարկում, թե որքանով են 47 մասնակից պետություններն իրականացնում այն միջոցառումները, որոնք պարունակում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի Rec(2002)5 Հանձնարարականը՝ կանանց բռնությունից պաշտպանելու վերաբերյալ: Մշտադիտարկման այդ զեկույցները կարևոր տեղեկատվություն են տրամադրում կանանց նկատմամբ բռնությանը պետությունների արագ արձագանքման աստիճանի մասին՝ օրենսդրության, քաղաքականության, ծառայությունների, տվյալների հավաքագրման և կանխարգելիչ քայլերի միջոցով, ներառյալ իրազեկության բարձրացումը: Սակայն ամենավերջին շրջանում կատարված մշտադիտարկման զեկույցն ընդունում է, որ. <<շատ դժվար է չափել իրազեկության բարձրացման աստիճանը, առավել դյուրին է սահմանել մի ցուցանիշ, որը կգնահատի դա համեմատական ճանապարհով որոշակի ժամանակի ընթացքում>><sup>6</sup> :

---

<sup>6</sup> Եվրոպայի խորհուրդ (2014թ), <<Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում կանանց բռնությունից պաշտպանելու մասին Rec (2002)5 Հանձնարարականի իրականացման մշտադիտարկման չորրորդ փուլի վերլուծական ուսումնասիրությունը >>, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, էջ 35: Ամենավերջին, ինչպես նաև մյուս բոլոր, մշտադիտարկման զեկույցները

## Մահմանումներ

Գոյություն ունեն բազմաթիվ մեկնաբանություններ և սահմանումներ իրազեկության բարձրացման նախաձեռնությունները բնութագրելու համար: Դրանք տատանվում են նեղից մինչև ավելի լայն սահմանումներ, հղումներ կատարելով հանրային տեղեկատվության կամ հաղորդակցման նախաձեռնություններին՝ կանանց նկատմամբ բռնության ձևերի և տարածվածության առումով, օգնություն տրամադրող ծառայություններին և իրավական պաշտպանության միջոցներին: Դրանք կարող են իրազեկության բարձրացման հասկացությունը տարածել նաև կանանց նկատմամբ բռնության գործերով զբաղվող մանկավարժների և մասնագետների, լրատվամիջոցների պրոֆեսիոնալների և քաղաքականություն մշակողների վրա: Իրազեկության բարձրացման նախաձեռնությունները կարող են շատ բազմազան լինել, ճիշտ այնքան, որքան և այդ միջոցառումների ձևերը և հասարակական դերակատարները, որոնք առնչվում են դրանց նպաստմանը և դրանք կարող են տեղ գտնել մի շարք շրջանակներում՝ կախված բովանդակությունից և թիրախային լսարաններից: Այնպես որ կարևոր է ի նկատի ունենալ, որ այն միջոցառումները, որոնք առաջարկվում են իրականացնել Հոդված 13-ի համաձայն, միշտ չէ որ հնարավոր է տարբերել Ստամբուլի կոնվենցիայի այլ հոդվածներով պահանջվող միջոցառումներից, ինչպես օրինակ՝ կանանց իրավունքների և հնարավորությունների ընդլայնմանը,

դպրոցական կրթությանը և մասնագետների վերապատրաստմանը վերաբերվողները և նրանք, որոնք վերաբերում են այն առանցքային դերին, որ լրատվամիջոցներն ու մասնավոր հատվածը կարող են խաղալ:

## ԻՐԱԶԵԿՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԱՐՇԱՎՆԵՐԻ ԿԱՄ ԾՐԱԳՐԵՐԻ ՄՇԱԿՈՒՄԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

ԻՆՉԻՑ ՄԿՍԵԼ

**Իրազեկության բարձրացման արշավների կամ ծրագրերի շրջանակը**

Արդյունավետ լինելու համար իրազեկության բարձրացման նախաձեռնությունները պետք է մշակվեն որպես երկարաժամկետ և հետևողական (այլ ոչ որպես միանվագ կամ կարճաժամկետ) միջոցառումներ և որպես համապարփակ և համակարգված քաղաքականության փաթեթի անբաժանելի մաս, ինչպես օրինակ՝ կանանց նկատմամբ բռնության դեմ ներպետական բազմամյա գործողությունների պլան կամ ռազմավարություն: Ֆրանսիայի կառավարությունը, օրինակ, նման մոտեցում է որդեգրել կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի իր եռամյա հաջորդական գործողությունների պլանների համար (2005-2007թթ, 2008-2010թթ, 2011-2013թթ և ներկայիս՝ 2014-2016թթ), որոնցից յուրաքանչյուրը ներառում է հաղորդակցության և իրազեկության

բարձրագույն  
նազմավարություն:

հետևողական

միջոցառումների

## Ֆրանսիա

● Կանանց նկատմամբ բռնության դեմ իրազեկության բարձրացման պետական արշավներ (2001թ և ամեն տարի 2006-2014թթ) [www.stop-violences-femmes.gouv.fr](http://www.stop-violences-femmes.gouv.fr)

2000թ ֆրանսիական կառավարությունը լայնածավալ հետազոտություն է իրականացրել կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ (ENVEFF) և հետագայում դրա արդյունքների հիման վրա իրազեկության բարձրացման մի արշավ անցկացրել (Խախտել լռությունը, 2001թ):<sup>7</sup> 2000 - ականների կեսերից սկսած ֆրանսիայի կառավարությունն իրականացրել է կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի եռամյա գործողությունների ծրագրեր, որոնցում ներառվել են իրազեկության բարձրացմանն ուղղված ամենամյա հաղորդակցության արշավները: Արշավների ժամանակ օգտագործել են տպագիր և վիդեո սոցիալական գովազդներ հիմնական լրատվամիջոցներում<sup>8</sup>, ինչպես նաև թոուցիկներ, պաստառներ և բուկլետներ: Ամեն տարի քարոզարշավի սկիզբը սովորաբար պլանավորում են այնպես, որ այն համընկնի Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրվա՝ նոյեմբերի 25-ի հետ:

---

<sup>7</sup> ԵԱՀԿ ( 2009թ ), Bringing security home: combating violence against women in the OSCE region. A compilation of good practices, OSCE, pp. 39 - 40, հասանելի է՝ [www.osce.org/gender/37438](http://www.osce.org/gender/37438).

<sup>8</sup> Բոլոր քարոզարշավների տեսահոլովակները հասանելի են այստեղ՝ [www.stop-violences-femmes.gouv.fr](http://www.stop-violences-femmes.gouv.fr)

Վերը նշված կայքն ուղեկցում է արշավներին և տեղեկատվություն տրամադրում կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի մասին (սեռական բռնության, սեռական ոտնձգության, զուգընկերոջ բռնության, հարկադիր ամուսնության, կանացի սեռական օրգանների խեղման)՝ թե՛ զժի հեռախոսահամար, ֆրանսիական օրենսդրությամբ առաջարկվող պաշտպանություն, և տեղեկատվություն օգնության կարիք ունեցող կանանց, ինչպես նաև զոհերի հետ աշխատող մասնագետների համար: Այն նաև տեղեկատվություն է տրամադրում ՀԿ-ների վերաբերյալ, որոնց կարելի է դիմել օգնության համար:

2011թ իրազեկության բարձրացման միջոցառումների հիմնական նպատակը թե՛ զժերի գոյության մասին տեղյակ պահելն էր և օգնության դիմելու համար զոհերին քաջալերելը: Այն մեկնարկել էր մասնագիտացված ՀԿ-ների հետ համագործակցության պայմաններում (հատկապես FNSF ցանցի, որը 2010 - 2012թթ թե՛ զժի պատասխանատուն էր) և միջոցներ էին ձեռնարկվել թե՛ զժին զանգերի սպասված աճին համարժեքորեն արձագանքելու համար:<sup>9</sup> 2012թ իրազեկության բարձրացման արշավում կառավարության ուշադրության կենտրոնում էր գտնվում սեռական ոտնձգությունների խնդիրը՝ հատուկ կայքի ուղեկցությամբ:<sup>10</sup> Քարոզարշավը, որը սկսվեց 2013թ խրախուսեց կանանց դիմելու օգնության և օգտվելու ազգային թե՛ զժի հեռախոսահամարից - 3919 - որի ծածկույթը 2014թ ընդլայնվել էր: Ընթացիկ,

<sup>9</sup> Տե՛ս՝ [www.stop-violences-femmes.gouv.fr/IMG/pdf/dossierpresse.pdf](http://www.stop-violences-femmes.gouv.fr/IMG/pdf/dossierpresse.pdf)for details.

<sup>10</sup> Տե՛ս՝ [www.stop-harcèlement-sexuel.gouv.fr/](http://www.stop-harcèlement-sexuel.gouv.fr/).

Կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի գործողությունների 4-րդ պլանն ապահովում է իրազեկության բարձրացման համար նման միջոցառումների շարունակականությունը:<sup>11</sup>

Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ռազմավարության մշակումը ենթադրում է համապատասխան ֆինանսական ռեսուրսների հատկացում: Իրազեկության բարձրացման ծրագրի կամ արշավի բյուջեն, հաշվի առնելով դրա նպատակները, պետք է իրատեսական լինի: Այն դեպքերում, երբ պետական ռեսուրսները սահմանափակ են, կարող է անհրաժեշտ լինել լրացուցիչ ֆինանսավորում փնտրել (օրինակ, միջկառավարական մարմիններից) կամ բնաիրային ներդրումների տեսքով (ինչպես օրինակ, անվճար հիմունքներով գովազդային տարածքների, ստեղծագործական դիզայնի կամ կարծիքների հարցումների ծառայությունների, կամ աջակցություն ակադեմիական ինստիտուտներից մշտադիտարկման և գնահատման համար) արշավների իրականացման համար:

## **Գործընկերների ընտրություն**

Իրազեկության բարձրացման նախաձեռնության մշակումը պահանջում է փորձաքննություն հաղորդակցության ոլորտում, ինչպես նաև փորձառություն այդ գործում: Կանանց նկատմամբ բռնության դեմ իրազեկության բարձրացման նախաձեռնությունների մշակման համար

---

<sup>11</sup> Տե՛ս՝ <http://stop-violences-femmes.gouv.fr/IMG/pdf/Plan-de-lutte-contre-les-violences.pdf>

կառավարությունները պետք է ներգրավեն ոչ միայն հաղորդակցության ոլորտի փորձագետներին, այլ հավասարապես նաև քաղաքացիական հասարակության և թեմայի վերաբերյալ համապատասխան փորձառություն ունեցող այլ գործընկերների: Հատկապես պահանջվող փորձառություն ունեն կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու հարցերում մասնագիտացած ՀԿ-ները և նրանցից շատերը բազմամյա փորձ ունեն իրազեկության բարձրացման հարցերում: Կառավարությունները նաև կարող են դիտարկել իրազեկության բարձրացման նախաձեռնությունների պատասխանատվությունը կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի մեծ փորձ ունեցող քաղաքացիական հասարակության կազմակերպություններին լիազորելու հարցը: Գերմանիայի կառավարությունը, օրինակ, որդեգրել է նման մոտեցում և աջակցում է քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից մշակված և իրականացվող իրազեկության բարձրացման արշավներին:<sup>12</sup>

Մեծ խթան կարող է հանդիսանալ այնպիսի հիմքերի ստեղծումը, որոնք կապահովեն համապատասխան շրջանակ ավելի մեծ թվով գործընկերների մասնակցության համար, ներառյալ մասնավոր հատվածը և մեղիա ոլորտը: Թուրքիայում իրականացված բազմամյա նախաձեռնությունը, որտեղ դրական փոխազդեցությամբ գործում են կառավարությունը, Միավորված ազգերի կազմակերպությունը, ՀԿ-ները և մասնավոր հատվածի

12

Stu` [www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/germany/NationalReport\\_en.asp](http://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/germany/NationalReport_en.asp) - cf. , 4.) Ընթացիկ արշավներ, որոնց աջակցում է Դաշնային կառավարությունը ,:



դերակատարները և արշավները, ծառայում է որպես ճկուն, բազմակողմանի միության միջոցով ավելի մեծ ներուժով օժտված կառույցի օրինակ:<sup>13</sup>

---

<sup>13</sup> Արշավների և գործընթացում ներգրավվածության նկարագրության մանրամասն տեղեկությունների համար տես՝ [www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/turkey/](http://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/turkey/) և UNFPA (2007), Programming to address violence against women. 10 case studies, United Nations Population Fund, New York, p. 57f., հասանելի է՝ [www.unfpa.org/public/global/pid/386](http://www.unfpa.org/public/global/pid/386).

## Թուրքիա

Կանգնեցնել կանանց նկատմամբ բռնությունը արշավը Թուրքիայում (իրականացրել է Թուրքիայի կառավարության Կանանց կարգավիճակի հարցերով գլխավոր տնօրինությունը, KSGM, 2004 - 2008թթ)

2004թ հանրության կողմից ցուցաբերված մեծ հետաքրքրությունը այսպես կոչված „պատվի սպանություններ,, գործերի հետ կապված հետաքննությունների արդյունքների նկատմամբ դարձավ Թուրքիայում կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի իրազեկության բարձրացման երկարատև գործունեության ելակետը: Թուրքիայի կառավարության Կանանց կարգավիճակի հարցերով Գլխավոր տնօրինությունը (KSGM), Միավորված ազգերի կազմակերպության բնակչության հիմնադրամի (UNFPA) տեխնիկական աջակցությամբ, մշակեց մի տեղեկատվական և շահերի պաշտպանության արշավ՝ սկզբում մեկ տարվա համար: Այն մասնավորապես թիրախավորել էր տղամարդկանց և որպես գործընկերներ ներառել մասնավոր հատվածը և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև հանրաձանաչ մի խոսնակի, Թուրքիայի Ֆուտբոլի ֆեդերացիան, Թուրքիայի Լրագրողների միությունը, կառավարության բարձրաստիճան պաշտոնյաների և կրոնական առաջնորդների: Թուրքիայում ամենամեծ տպաքանակ ունեցող Հուրրիեթ օրաթերթի հրատարակիչ մասնավոր մեդիա - ընկերության կողմից ընտանեկան բռնության դեմ իրազեկության բարձրացման լրացուցիչ արշավի մեկնարկը թույլ տվեց կարևոր փոխհարաբերություններ ստեղծել, ինչը հանգեցրեց ավելի լայն ու ավելի կայուն լուսաբանման և գործունեության:

Խոշոր լրատվամիջոցի հետ համագործակցությունը հազվագյուտ հնարավորություն ընձեռեց վերապատրաստել այդ ընկերության և այլ լրագրողներին, ովքեր զբաղվում են կանանց նկատմամբ կատարված բռնության դեպքերի մասին հաղորդագրություններ տարածելով: Այն նաև օգնեց ավելացնելու թեմային նվիրված հաղորդագրությունները թերթում և հիմնելու հեռախոսային թեժ գիծ Ստամբուլի տարածաշրջանում, ինչպես նաև կանանց հարցերով զբաղվող ՀԿ-ների համար ստեղծելու մի հարթակ՝ կանանց ձայն տալով հարցերի լայն շրջանակի շուրջ:

Արշավի միջոցառումներն իրականացվում էին զուգահեռաբար տեխնիկական և քաղաքական ուղղություններով, ինչպես օրինակ՝ դասընթացների անցկացումը մասնավոր հատվածի մասնագետների, ոստիկանության աշխատակիցների, կրոնական առաջնորդների և լրագրողների համար, և նաև լրացուցիչ հետազոտությունների կատարումը՝ նոր ռազմավարություն մշակելու համար (ներառյալ գործողությունների համապետական ծրագիրը ընտանեկան բռնության դեմ պայքարի գործում, կանանց համար նոր ապաստարանների և թեժ գծի ստեղծումը), դրանով իսկ հասարակական աջակցություն հարուցելով այդ նախաձեռնությունների համար:<sup>14</sup>

---

<sup>14</sup> Արշավների և գործընթացում ներգրավվածության նկարագրության մանրամասն տեղեկությունների համար տես՝ [www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/turkey/](http://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/countryinformationpages/turkey/) և UNFPA (2007) վերոհիշյալ աշխատությունը:

## Իրազեկության բարձրացման արշավի կամ ծրագրի մշակում

Իրազեկության բարձրացման արշավի կամ ծրագրի մշակումը պետք է հիմնված լինի հստակորեն սահմանված նպատակների, ակնկալվող արդյունքների և դրանց հասնելուն ուղղված միջոցառումների վրա (տրամաբանական մոդել): Ձևակերպելով նպատակներն ու խնդիրները, հստակորեն սահմանելով, թե ում իրազեկությունն է պետք բարձրացնել և ինչու, թե ինչու է ընտրվել հենց այդ լսարանը և ինչպես է պետք հասնել այս ամենին՝ կօգնեն ճշտելու ակնկալվող ավանդը կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու գործում ավելի լայն ռազմավարություն մշակելու համար: Այն նաև շրջանակ է ապահովում միջոցառումների արդյունավետության գնահատման համար:

Իրազեկության բարձրացման արշավի կամ ծրագրի հետ կապված արդյունքների և հետևանքների ակնկալիքները պետք է իրատեսական լինեն.<sup>15</sup> Մինչդեռ վերաբերմունքի

---

<sup>15</sup> Ինչ վերաբերում է կանանց նկատմամբ բռնության հետ կապված շահերի պաշտպանության քարոզարշավների իրատեսական ակնկալիքներին (ինչը նաև համապատասխան պատկերացումներ է տալիս իրազեկության բարձրացման արշավների մասին), տես՝ Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը վերջ տալու ՄԱԿ-ի Կանանց վիրտուալ գիտելիքների կենտրոնի կայքը՝ [www.endvawnow.org/en/articles/1155-what-can-one-expect-from-a-campaign-to-end-vaw.html](http://www.endvawnow.org/en/articles/1155-what-can-one-expect-from-a-campaign-to-end-vaw.html). Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը նույնպես զգուշացնում է, որ՝ «<ղծվար է չափել պոտենցիալ փոփոխությունները բռնության

և վարքի մեջ փոփոխությունները պահանջում են լրացուցիչ քայլեր կատարել, իրազեկության բարձրացման արշավները կամ ծրագրերը կարող են օգնել <<խախտելու լուրջությունը>> և նպաստելու այն բանի գիտակցմանը, որ կանանց նկատմամբ բռնությունը սոցիալական խնդիր է, որը պետք է ամբողջությամբ լուծվի կառավարության և հանրության կողմից համատեղ: Հավաստի տեղեկությունների ապահովումը դրա ձևերի և տարածվածության վերաբերյալ, ինչպես նաև երեխաների վրա դրա թողած ազդեցության, կլինի առաջին և էական քայլը և կարող է օգնել առասպելները հերքելուն և բռնությունից տուժածների հասկացողությունը բարձրացնելուն, ինչպես նաև նրանց, ովքեր <<կողմնակի դիտորդներ են>> և առաջարկություններ ներկայացնելու նման բռնությունն ու վերաբերմունքն արդարացնող մոտեցումները բացառելու և վերացնելու համար: Իրազեկության բարձրացումը գոյություն ունեցող իրավական և պաշտպանական այլ միջոցների և աջակցող ծառայությունների նկատմամբ կարող է օգնել խրախուսելու զոհերին աջակցություն և փոխհատուցում փնտրելու և մեղավորներին բժշկական օգնության դիմելու

---

աստիճանների մեջ լրատվամիջոցների միջամտությունների հետ կապված>>, միաժամանակ ընդգծելով, որ հետազոտությունները ցույց են տալիս, որ իրենց լսարանների վարքի գիտակցումը և դրանց անդամների ներգրավումը միջամտությունների մշակման գործում առանցքային նշանակություն ունեն: Տես՝ WHO (2009), „Violence prevention: the evidence. Promoting gender equality to prevent violence against women (Series of briefings on violence prevention), World Health Organization>>, տես՝ [http://whqlibdoc.who.int/publications/2009/978241597883\\_eng.pdf](http://whqlibdoc.who.int/publications/2009/978241597883_eng.pdf)

հարցում:

Իրազեկության բարձրացման նախաձեռնության արդյունավետ ծրագիրը պետք է հիմնված լինի հարցի վերաբերյալ ունեցած խորը գիտելիքների, թիրախային լսարանի, դրանց հասնելու լավագույն ուղիների և ամենաարդյունավետ հաղորդագրությունների վրա: Օրինակ, բնակչության որոշակի շերտերի վերաբերյալ իրազեկության թեմայով հետազոտության տվյալները կարող են նախատեսել իրազեկության բարձրացման միջոցառումների էլակետային քայլերը, ինչպես նաև գնահատել դրանց արդյունավետությունը, եթե համադրելի տվյալներ հնարավոր լինի հավաքել հետագայում: Որոշ դեպքերում, իրազեկության բարձրացման միջոցառման նախապատրաստության առաջին քայլ կարող է հանդիսանալ ուսումնասիրությունների կատարումը համապատասխան տվյալներ ձեռք բերելու համար: Եվրամիության ողջ տարածքն ընդգրկող գենդերային հիմքով կանանց նկատմամբ բռնության չափերի և բնույթի մասին տվյալները, որոնք հասանելի են դարձել Հիմնարար իրավունքների գործակալության կողմից իրականացված կանանց նկատմամբ բռնության հետազոտության արդյունքների հրապարակումից հետո (2014թ)<sup>16</sup>, կարող են օգտակար տեղեկություններ տրամադրել Եվրոպայի խորհրդի և Եվրոպական միության անդամ հանդիսացող 28 պետություններում իրազեկության բարձրացման նախաձեռնությունների մասին: Հավասարապես, կանանց

---

<sup>16</sup> Եվրոպական միության Հիմնարար իրավունքների գործակալություն (2014թ), Violence against women: an EU-wide survey. Main results, Publications Office of the European Union, Luxembourg, տե՛ս <http://fra.europa.eu/en/publication/2014/vaw-survey-main-results>.

նկատմամբ ընտանեկան բռնության մասին Եվրոբարոմետրի (2010թ)<sup>17</sup> Հատուկ զեկույցում ներկայացված են Եվրամիության ողջ տարածքում ընտանեկան բռնության մասին հանրության տեղեկացվածության և կարծիքի մասին ուսումնասիրությունների արդյունքները, և որպես տասը տարի առաջ<sup>18</sup> համանման կարծիքի հարցմանը հաջորդող գործողություն արժեքավոր տեղեկություն են տրամադրել բռնության տվյալ ձևի նկատմամբ իրազեկության և վերաբերմունքի փոփոխությունների մասին:

## **Գնահատման կարևորությունը**

Չնայած մի քանի տասնամյակ ձգվող գործնական հիմքի վրա կատարվող ուսուցման, կանանց նկատմամբ բռնության մասին իրազեկության բարձրացման միջոցառումները հազվադեպ են գնահատվել Եվրոպայում, ոչ էլ դրանց արդյունքներն ու հետևանքներն են պարբերաբար արժանացել գնահատականի:<sup>19</sup> Կանանց

---

<sup>17</sup> Եվրոպական հանձնաժողովի Կապի գլխավոր տնօրինություն (2014թ), Eurobarometer 73.2: Domestic violence against women, TNS Opinion & Social, Brussels. տես՝ [http://ec.europa.eu/public\\_opinion/archives/ebs\\_344\\_en.pdf](http://ec.europa.eu/public_opinion/archives/ebs_344_en.pdf).

<sup>18</sup> Եվրոպական հանձնաժողովի Տեղեկատվության, կապի, մշակույթի և տեսալսողական լրատվամիջոցների X Գլխավոր տնօրինություն (1999թ ), Eurobarometer 51.0: Europeans and their views on domestic violence against women, Brussels. Տես՝ [http://ec.europa.eu/public\\_opinion/archives/ebs/ebs\\_127\\_en.pdf](http://ec.europa.eu/public_opinion/archives/ebs/ebs_127_en.pdf).

<sup>19</sup> Եվրոպական հանձնաժողով (2012թ), Exchange of good practices on gender equality: awareness-raising activities to fight violence against women and girls. Summary report, European Commission (Justice). UK. pp. 12-13, Տես՝ [http://ec.europa.eu/justice/gender-equality/files/exchange\\_of\\_good\\_practice\\_uk/summary\\_report\\_uk\\_2012\\_en.pdf](http://ec.europa.eu/justice/gender-equality/files/exchange_of_good_practice_uk/summary_report_uk_2012_en.pdf).

նկատմամբ բռնության վերաբերյալ /համադրելի/ տվյալների և հետազոտությունների ընդհանուր առմամբ բացակայությունը խոչընդոտ է հանդիսանում այս համատեքստում, ինչին Ստամբուլի կոնվենցիան տվյալների հավաքմանը և հետազոտությանը նվիրված դրույթում (Հոդված 11) ձգտում է անդրադառնալ: Մակայն պետք է նշել, որ իրազեկության բարձրացման նախաձեռնությունների կամ արշավների ազդեցության չափի սահմանումը (դրանց կանխարգելման մեջ ունեցած ավանդի առումով) որպես կանոն մարտահրավեր է հանդիսանում, կապված կանանց նկատմամբ բռնության և դրա վերացման գործոնների բազմազանության և բարդության հետ:<sup>20</sup> Այդ իսկ պատճառով իրազեկության բարձրացման նախաձեռնության գնահատման համակարգի մշակումը վճռորոշ նշանակություն ունի և պետք է պատշաճ ուշադրության արժանանա՝ ներառելով անհրաժեշտ ռեսուրսների տրամադրումը:

---

<sup>20</sup> Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը վերջ տալու ՄԱԿ -ի Կանանց վիրտուալ գիտելիքների կենտրոնում արշավների ազդեցությունը գնահատող մեթոդաբանությունների օրինակներ (2011թ), տես՝ Campaigns to end violence against women and girls, UN Women, in particular Chapter 7.10: Assessing impact in campaigns, հասանելի է՝ [www.endvawnow.org/en/articles/1339-assessing-impact-in-campaigns.html?next=1340](http://www.endvawnow.org/en/articles/1339-assessing-impact-in-campaigns.html?next=1340) and tools for evaluation of mass communications initiatives, in Chapter 7.9: Campaign evaluation, հասանելի է՝ [www.endvawnow.org/en/articles/1336-special-tools-to-evaluate-mass-communication-activities.html?next=1337](http://www.endvawnow.org/en/articles/1336-special-tools-to-evaluate-mass-communication-activities.html?next=1337); Chapter 1.5: What can one expect from a campaign on VAW? հասանելի է՝ [www.endvawnow.org/en/articles/1155-what-can-one-expect-from-a-campaign-to-end-vaw.html](http://www.endvawnow.org/en/articles/1155-what-can-one-expect-from-a-campaign-to-end-vaw.html); on the complexity of factors leading to perpetration of violence against women, cf, Hagemann-White, C. et al. ( 2010 ), op.cit.



## Ուղերձների և լսարանների ընտրություն

Իրազեկության բարձրացման ուղերձները պետք է հիմնված լինեն կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության հստակ սահմանումների վրա՝ մարդու իրավունքների և գենդերային պատկանելիության ըմբռնմամբ, ինչպես պահանջվում է Ստամբուլի կոնվենցիայով (Հոդված 3): Դրանք պետք է անդրադառնան ոչ միայն հետևանքներին, այլև կանանց նկատմամբ բռնություն ծնող խորքային պատճառներին. գենդերային անհավասարությանը և խտրականությանը, ինչպես նաև այն նորմերին և կարծրատիպերին, որոնք հանդուրժում և համակերպվում են կանանց նկատմամբ բռնության հետ:

### **Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության տարբեր ձևերի վերաբերյալ իրազեկության բարձրացում**

13-րդ հոդվածը պարտավորություն է պարունակում հանրության մեջ բարձրացնել իրազեկությունն ու ըմբռնումները կոնվենցիայում ներառված բռնության տարբեր ձևերի դրսևորումների նկատմամբ, ինչպես նաև դրանց ազդեցության նկատմամբ երեխաների վրա, մասնակից պետությունները հետևաբար պետք է ապահովեն իրազեկության բարձրացումը բոլոր այդ առումներով: Ամբողջ տարածաշրջանում Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններն իրականացրել են իրազեկության բարձրացման միջոցառումների մի լայն շարք, և/կամ աջակցություն ապահովել

(Ֆինանսական կամ այլ) իրազեկության բարձրացման միջոցառումներին, որոնք իրականացվել են մասնագիտացված ոչ-կառավարական կազմակերպությունների կողմից: Կանանց նկատմամբ ամենից ավելի պարբերաբար և լայնորեն քննարկվող բռնության տեսակը, ներառյալ համաեվրոպական երկու արշավների միջոցով<sup>21</sup>, դա՝ զուգընկերոջ կողմից կատարվող բռնությունն է կամ ընտանեկան բռնությունը: Այն երկրներում, որտեղ իրազեկության բարձրացման միջոցառումներն իրականացվում են կանանց նկատմամբ բռնության միայն որոշակի ասպեկտների և ձևերի նկատմամբ, դեռևս չլուսաբանված բոլոր բռնությունները պետք է քննարկվեն առաջնահերթության կարգով երկարաժամկետ ռազմավարության շրջանակում, ինչը կապահովի որպեսզի բռնության բոլոր տեսակները քննության առնվեն, ներառյալ խոցելի և սահմանափակ հնարավորություններ ունեցող կանանց դեմ կատարված բռնությունը:

## **Լսարաններ և հասկացություն**

<<Ընդհանուր հասարակություն>> հասկացությունը հավաքականորեն վերաբերում է հասարակության տարբեր խմբերին, որոնց բոլորին պետք է հասանելի լինի տեղեկատվությունը կանանց նկատմամբ բռնության չափերի և ձևերի մասին, այն դադարեցնելու անհրաժեշտության և դրա զոհերին հասանելի

---

<sup>21</sup> Եվրոպական միության՝ Ընտանեկան բռնության դեմ եվրոպական մեկ տարվա արշավը (1999թ), և Եվրոպայի խորհրդի՝ Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի, ներառյալ ընտանեկան բռնությունը, 2006-2008թթ արշավը: [www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/](http://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/).

միջոցների ու ծառայությունների վերաբերյալ: Իրազեկության բարձրացման որևէ միջոցառում մշակելիս, սակայն, կարևոր է ապահովել, որպեսզի ուղերձները հստակ նախագծված լինեն հասնելու և լսելի լինելու համար այն մարդկանց, ովքեր ունեն դրանք լսելու կարիքը: Դա մասնակից պետությունների պարտավորությունն է՝ ապահովել, որպեսզի լայն հանրության բոլոր անդամներին (անկախ տարիքից, սոցիալական ծագումից, սեռից, ազգային պատկանելությունից և այլն, լինեն նրանք գոհ, հանցագործ, նրանցից ցանկացածի հետ աշխատող մասնագետ, քաղաքականություն մշակող, կարծիք ձևավորող և այլն) ուղղված իրազեկության բարձրացման միջոցառումները մշակված լինեն այնպես, որ արդյունավետ կերպով ներգործեն: Այսպիսով, Ստամբուլի կոնվենցիայով նախատեսված այս պարտավորության իրականացումը կպահանջի մի շարք տարբեր միջոցառումներ, որոնք կհասցեագրեն կոնկրետ լսարաններին տարբեր հաղորդագրություններ և մաս կկազմեն իրազեկության բարձրացման այն ընդհանուր երկարաժամկետ ռազմավարության, որը կտարածվի բնակչության բոլոր հատվածների վրա:

## **Առանցքային լսարաններ**

Կանանց նկատմամբ բռնության դեմ կառավարության մասնաճյուղերի կամ քաղաքացիական հասարակության կողմից իրականացվող իրազեկության բարձրացման բազմաթիվ միջոցառումներ հասցեագրված են, բացահայտ կամ թաքնված կերպով, կանանց, որպես բռնության տարբեր

ձևերի (պոտենցիալ) գոհերի:<sup>22</sup> Վերջին տարիներին գնալով աճում է այն բանի գիտակցումը, որ հավասարապես կարևոր է բարձրացնել տղամարդկանց և տղաների իրազեկությունը, ոչ միայն որպես (պոտենցիալ) հանցագործների, այլև որպես հասարակության անդամների, ովքեր կարևոր դերակատարում ունեն սեռական խտրականությունը և կանանց դեմ տղամարդկային բռնությունը իրենց հասակակիցների շրջանում վերացնելու գործում:<sup>23</sup> Մեծանում է նաև երիտասարդներին որպես թիրախ ճանաչելու գիտակցումը, որպեսզի մարտահրավեր նետվի դեռահասների հարաբերություններում վիրավորական վարքին և դրան նպաստող խորքային գենդերային կարծրատիպերին,<sup>24</sup> և հատուկ միջոցառումների միջոցով որպես թիրախ վերցվեն առանձնապես մարզինալացված խմբերը: Երբ ընտրվում է իրազեկության բարձրացման համար լսարան, շատ կարևոր է նկատի ունենալ, որ նրանք, ում

---

<sup>22</sup> Հայտնի և լայն տարածում ունեցող արշավների ուղերձները հրավիրում են բռնության գոհ դարձած կանանց «խախտել լռությունը», «արտահայտվել», «տեղեկանալ իրենց օրինական իրավունքների մասին և դիմել օգնության ծառայություններ:

<sup>23</sup> Որպես օրինակ կարող է ծառայել Վրաստանում Ամրապնդել կանխարգելումն ու հակազդումը ընտանեկան բռնությանը նախագծի իրազեկության բարձրացման բաղադրիչը (SHiEld), որը ներառում է 16 - 65 տարեկան տղամարդկանց հասցեագրված ուղերձները, կապված կանանց նկատմամբ ընտանեկան բռնության գործելակերպում գրո հանդուրժողականությանը նպաստելու հետ, տես՝ UN Women (2011), «Enhancing Prevention and Response to Domestic Violence in Georgia - SHiEld», Final evaluation report, հասանելի է՝ [www.endvawnow.org/uploads/browser/files/shield\\_communications\\_report\\_fnal\\_fnal.pdf](http://www.endvawnow.org/uploads/browser/files/shield_communications_report_fnal_fnal.pdf).

<sup>24</sup> Միացյալ Թագավորության Ներքին գործերի նախարարության Դաշարաշահում է արշավը երիտասարդներին թիրախավորող նման մի արշավի օրինակ է. <http://thisisabuse.direct.gov.uk/>.

վրա դեռևս չի տարածվել այն, պետք է դիտարկվեն առաջնահերթության կարգով երկարաժամկետ ռազմավարության շրջանակում, ինչը կապահովի, որպեսզի ժամանակի ընթացքում հասարակության բոլոր անդամները ներառվեն դրանում:

## **Էթիկական նկատառումներ**

Կանանց նկատմամբ բռնության դեմ իրազեկության բարձրացման համար գործադրված ջանքերում պետք է մանրակրկիտ քննարկել արտահայտությունների և պատկերների ընտրությունը: Հաղորդագրությունների և պատկերների որոշ տեսակներ կարող են ամրապնդել առասպելների, կարծրատիպերի և զոհերին մեղադրելու վերաբերմունքը, ինչը կհավերժացնի կանանց նկատմամբ բռնություն ձևավորող նպաստավոր միջավայրը: Բռնության և վիրավորանքի ակնհայտ պատկերները կարող են ուշադրություն գրավել „շոկային ցնցման,, միջոցով, բայց կարևոր է նկատի առնել նման մոտեցման հետևանքները: Նաև, թեպետ անմիջապես բռնության զոհերից ստացած տեղեկատվությունը կարող է ուժեղ միջոց հանդիսանալ հաղորդագրություն տալու համար, այն պետք է դառնա հանրության սեփականությունը միայն այդ անձանց զգացմունքային և ֆիզիկական անվտանգության հետ կապված հետևանքների մանրամասն քննարկումից հետո: Հետևաբար, կանանց նկատմամբ բռնության դեմ աշխատանքներում արհեստավարժ անձանց ներգրավումը, հաճախ կանանց հարցերով մասնագիտացած ՀԿ-ների, հաղորդագրությունների մշակման գործում առանցքային նշանակություն ունի երաշխավորելու համար, որ զոհերին սպասվող հետևանքները հաշվի են առնված:

Ցանկալի է նաև առկա հանձնարարականներից, ուղեցույցներից և ստուգաթերթերից տեղեկանալ կանանց նկատմամբ բռնության թեմաների քննարկման որոշակի կանոնների վերաբերյալ: Օրինակ, UNIFEM-ի (այժմ՝ UN Women) կողմից մշակված գործելակերպը կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու համար կարևորում է դա և ներկայացնում կանոնների մի ցուցակ, որը ներառում է իրավունքներն ու հնարավորություններն ընդլայնող առաջարկություններ:<sup>25</sup> Իռլանդիայում Ընտանեկան, սեռական և զենդերային հիմքով բռնության կանխարգելման ազգային վարչությունը (COSC) մի ուղեցույց է հրատարակել այն խմբերի համար, որոնք COSC-ի դրամաշնորհներ են ստանում իրազեկության բարձրացման/հաղորդացման նախաձեռնությունների համար:<sup>26</sup>

---

<sup>25</sup> UNIFEM (2003), Making a difference: strategic communications to end violence against women, Միավորված ազգերի կազմակերպության Կանանց զարգացման հիմնադրամ, Նյու Յորք, էջ 16, հասանելի է՝ [www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html](http://www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html).

<sup>26</sup> COSC (2013թ), «Հաղորդակցության փաստաթուղթ ընտանեկան, սեռական և զենդերային հիմքով բռնություն հասկացողության տարբեր մոտեցումների խթանման և զարգացման համար», Ընտանեկան, սեռական և զենդերային հիմքով բռնության կանխարգելման Ազգային վարչություն (COSC), Դուբլին, հասանելի է՝ [www.cosc.ie/en/COSC/Communications](http://www.cosc.ie/en/COSC/Communications), և COSC „Guiding principles for public aware-ness-raising activities relating to domestic,sexual and gender-based violence»՝ հասանելի է՝

[www.cosc.ie/en/COSC/Cosc%20%20Guidance%20Principles%20Document%20-%20updated%2017th%20June%202011.pdf/Files/Cosc%20%20Guidance%20Principles%20Document%20-%20updated%2017th%20June%202011.pdf](http://www.cosc.ie/en/COSC/Cosc%20%20Guidance%20Principles%20Document%20-%20updated%2017th%20June%202011.pdf/Files/Cosc%20%20Guidance%20Principles%20Document%20-%20updated%2017th%20June%202011.pdf).

Միացյալ Թագավորության Կառավարության Իրավահավասարության հարցերով վարչությունը հրատարակել է <<Պայքար կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ. ուղեցույց հաղորդակցություններ տարածելու դրական գործելակերպի մասին>> գործողությունների շարք պարունակող ձեռնակ ուղղված կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ հաղորդակցական աշխատանքի մեջ ներգրավված, կառավարության կողմից լիազորված, անձանց:<sup>27</sup>

### **Հաղորդագրությունների ընտրությունը**

Ազգային և տեղական համատեքստում իրականությանը համապատասխանող հաղորդագրությունների ապահովումը առանցքային

---

նախաձեռնությունը, որոշ հարցեր են բարձրացրել, մասնավորապես այն փաստը, որ կառավարության Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության դեմ գործողությունների ազգային պլանը բավարար չափով հաշվի չի առնում կանանց նկատմամբ բռնության գենդերային կողմը: Բնչպես նաև, օրինակ արշավի ժամանակ օգտագործված <<պարզ և արդյունավետ>> ուղերձները, որոնք նախատեսված են ուղեցույցում, որոշ մասնագիտացված ՀԿ -ների կողմից չեն ընկալվում որպես արդյունավետ:

Դա ընդգծում է գիտական գնահատականներ տալու անհրաժեշտությունը հաղորդակցությունների/իրազեկության բարձրացման միջոցառումների ազդեցության/արդյունքների իրական գնահատման համար:

<sup>27</sup> Government Equalities Office (2009), Tackling violence against women and girls. A guide to good practice communications, London, հասանելի է՝ [http://sta.geo.useconnect.co.uk/news/vaw\\_guidance.aspx](http://sta.geo.useconnect.co.uk/news/vaw_guidance.aspx). Այն փաստը, որ ուղեցույցը ստեղծվել է PR գործակալության կողմից առանց մասնագիտացված ՀԿ-ների մասնակցության, ընդգծվել է այս բնագավառում աշխատող որոշ փորձագետների կողմից:

նշանակություն ունի, ինչպես պատկերների տեսակի առումով, այնպես էլ մշակութային յուրահատկությունների և այլ արդիական գործոնների առումով: Ազգային և տեղական որոշ համատեքստերում կարող է գրաֆիկական պատկերների օգտագործումն ավելի ընդունելի լինել, քան այլ համատեքստերում: Այլ վայրերում կարող է ավելի ազդեցիկ լինել անհրաժեշտ <<շոկային ցնցման>> ստեղծումը՝ կիրառելով ուղերձի հաղորդման ավելի ճկուն ձևեր: Նման մոտեցման օրինակ կարելի է գտնել 1992թ Շոտլանդիայում նախաձեռնած՝ Ջրո հանդուրժողականության արշավի ժամանակ, որտեղ ներկայացված էին խաղաղ պատկերներ, զուգորդված ընտանեկան բռնության մասին անհերքելի փաստերով, փոխանակ պատկերելու միայն բռնություն, վնասվածք կամ զոհ: Իսկապես էլ, հենց պատկերների և տեքստի նման համադրումն էլ ստեղծեց <<շոկային ցնցում>> և գրավեց հանդիսատեսների ուշադրությունը:<sup>28</sup> Բելգիայի ֆրանսախոս մասում զուգընկերոջ կողմից հոգեբանական բռնության ենթարկվելու մասին Fred et Marie/Marie et Fred իրազեկության բարձրացման նախաձեռնության ընթացքում ցուցադրվում է կարճամետրաժ ֆիլմերի մի <<շարք>>, որտեղ ոչ-զգայացունց դիտարկումների ճանապարհով պատկերվել է հոգեբանական բռնության վարքագիծը հարաբերություններում և արձագանքը դրա նկատմամբ թե զոհի, թե ականատեսների կողմից:<sup>29</sup>

---

<sup>28</sup> Kitzinger J. (1994), "Challenging sexual violence against girls: a social awareness approach", *Child Abuse Review*, Vol. 3, No. 4, pp. 246-248, տես: <http://cf.ac.uk/jomec/resources/ ABUSEREV.pdf>.

<sup>29</sup> Տես՝ [www.fredetmarie.be/](http://www.fredetmarie.be/); [www.marieetfred.be/](http://www.marieetfred.be/).



Զրո հանդուրժողականության արշավ - Էդինբուրգ, Շոտլանդիա, 1992թ, [www.zerotolerance.org.uk](http://www.zerotolerance.org.uk)

1992թ Էդինբուրգի Շրջանային խորհրդի Կանանց կոմիտեն (Շոտլանդիա, ՄԹ), համագործակցելով կանանց տեղական կազմակերպությունների հետ, նախաձեռնեց Զրո հանդուրժողականության արշավ՝ հանրության իրազեկության բարձրացման առաջին արշավը Եվրոպայում, փորձելով մարտահրավեր նետել կանանց և աղջիկների նկատմամբ բռնության հանդեպ սոցիալական վերաբերմունքին և հերքել կանանց նկատմամբ տղամարդկանց բռնության մասին առասպելներն ու կարծրատիպերը:

Էդինբուրգ քաղաքում այն տևեց վեց ամիս և իր ուշադրության կենտրոնում էր պահում կանանց նկատմամբ բռնության տարածվածության հարցը:<sup>30</sup> Ողջ քաղաքով մեկ տարբեր պատկերներով և հաղորդագրություններով պաստառներ էին փակցված գովազդային վահանակներին և պատերին և հասարակական շենքերի ներսում: Հիմնված լինելով հետազոտությունների վրա և ամրապնդված կանանց և երեխաների ապրումների պատմություններով, պաստառներում օգտագործվել էին սև ու սպիտակ լուսանկարներ և սթափ, փաստացի տեքստեր, որոնք հերքում էին կանանց և աղջիկների նկատմամբ բռնության մասին որոշ առավել տարածված առասպելները: Բավականին ոճային կամ խաղաղ պատկերների և ցնցող փաստերի համադրումը կանանց և աղջիկների նկատմամբ տղամարդկանց բռնության

---

<sup>30</sup> <http://zerotolerance.org.uk/projects/PreviousCampaigns/1/13>.

մասին ապացուցեցին իրենց բարձր արդյունավետությունը որպես ռազմավարություն և արշավի առաջին փուլի գնահատումը ցույց տվեց, որ արշավն ու իր հղած հաղորդագրությունները լավ ընդունելության են արժանացել էդինբուրգյան հասարակության կողմից:<sup>31</sup> Արշավի համատեքստում օգտագործված մյուս նյութերը ներառում էին տեղեկատվական թղթապանակներ, բացիկներ և էջանիշ, որ բաժանվում էին Քաղաքային գրադարանում: Միջոցառման լայնորեն լուսաբանումը լրատվամիջոցների կողմից ապահովել էին տեղական և ազգային մակարդակում լրատվամիջոցների համագործակցության շնորհիվ: Որպես արշավի մաս մասնագետների և լայն հանրության համար կազմակերպվում էին տարբեր միջոցառումներ:

Ավելի քան քսան տարի առաջ ստեղծված հինգ սև ու սպիտակ գույներով պաստառները մինչ օրս էլ մնում են որպես կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ իրազեկության բարձրացման դրական գործելակերպի նմուշներ: Առաջին պաստառում պատկերված են երկու խաղացող աղջիկներ և կարդում ենք. «Ժամանակի ընթացքում նրանք կդառնան 18 տարեկան և նրանցից մեկը կենթարկվի սեռական չարաշահման»:<sup>32</sup> Հաջորդ պաստառը ուշադրությունը հրավիրում է կանանց կյանքում սեռական բռնության լայն չափերի վրա և գրված է. «Երեքից մինչև ինսուներեք - կանայք բռնաբարվում են >>, միննույն ժամանակ ընդգծելով իրենց ծանոթ տղամարդկանցից

---

<sup>31</sup> Kitzinger J. (1994), op. cit.

կանանց համար սպառնացող ռիսկերը հետևյալ կարգախոսով. «Ամուսին, հայր, անձանոթ - տղամարդկանց կողմից ուժի չարաշահումը՝ հանցագործություն է»:

Երրորդ պաստառն ուշադրությունը կենտրոնացնում էր ընտանեկան բռնության վրա հետևյալ ուղերձով. «Կինն ապրում էր մի հաջողակ գործարարի, սիրող հոր և հանրության հարգված անդամի հետ: Անցյալ շաբաթ նա կնոջը տեղափոխել է հիվանդանոց»:

Չորրորդ պաստառը հետևյալ կարգախոսն էր պարունակում. «Ոչ մի տղամարդ դրա իրավունքը չունի» , ինչը վերաբերում էր արշավում ներառված բոլոր տեսակի բռնություններին: Եվ վերջապես հինգերորդ պաստառն ուղղված էր երիտասարդ մարդկանց հետևյալ ուղերձով. «Երբ նրանք ասում են՝ ոչ, նրանք նկատի ունեն հենց՝ ոչ: Որոշ տղամարդիկ դա չեն լսում»:

Իրազեկության բարձրացման արշավը խթանեց և կենտրոնացրեց ուշադրությունը օրենսդրական և քաղաքական փոփոխությունների հետ կապված հետագա գործունեության իրականացման վրա և հանգեցրեց մի անկախ ճնշում գործադրող խմբի ձևավորմանը հետևելու այդ ամենին: Չրո հանդուրժողականությունն ինքն իրեն հաստատեց որպես մի շարունակական ձեռնարկում նոր և նորարարական իրազեկության բարձրացման արշավների համար, ինչը շարունակվում է առ այսօր և նրա մոտեցումը ոգեշնչել է բազմաթիվ արշավների անցկացմանը ողջ Միացյալ Թագավորությունում և Եվրոպայում:

Հաղորդագրությունները, որոնք ճշգրիտ փաստեր են

տրամադրում կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ, կարող են ավելացնել հարցի շուրջ իրազեկվածությունը և օգնել հերքելու առասպելներն ու թյուրըմբռումները: Շատ կարևոր է խուսափել սխալ տեղեկատվություն, առասպելները հավերժացնող կամ անհամաչափ վախ տարածող հաղորդագրություններից: Օրինակ, եթե բռնաբարության համար դատապարտվածների թիվը աննշան է (իսկ դա այդպես է բոլոր եվրոպական երկրներում), տղամարդկանց հասցեագրված ուղերձը, որը նշում է, թե բռնաբարությունը կհանգեցնի ազատագրվման՝ ճշգրիտ չէ և, հետևաբար, անօգուտ: Նմանապես ուղերձները, որոնք երիտասարդ կանանց զգուշացնում են սեռական բռնության ենթարկվելու վտանգի մասին կապված բարերում կամ ակումբներում խմելու հետ, անարդյունավետ են, քանի որ դրանք պատասխանատվությունը պոտենցիալ հանցագործից դնում են պոտենցիալ զոհի վրա:<sup>32</sup>

Ուղերձները պետք է ճշգրիտ տեղեկատվություն տրամադրեն բռնության ձևերի, դրանց տարածվածության, հետևանքների և իրավական պաշտպանության միջոցների, ինչպես նաև տուժածների համար հասանելի աջակցության մասին և պետք է առաջարկեն որոշակի գործողություններ, որոնք կարող են ձեռնարկվել: Իրազեկության բարձրացման միջոցառումների համատեքստում

---

<sup>32</sup> Brooks O. (2011), “Guys! Stop doing it! Young women’s adoption and rejection of safety advice when socialising in bars, pubs and clubs” (Տղաներ, դադարեցրեք դա անել, Երիտասարդ կանայք ընդունում են և մերժում անվտանգության խորհուրդները բարերում, պանդոկներում և ակումբներում տղամարդկանց հետ շփվելիս), *British Journal of Criminology* 2011, vol. 51, issue 4, pp. 635 - 651.

գործողությունների դիմելու կոչը պետք է, օրինակ .

- խրախուսի գոհերին արտահայտվելու և դիմելու օգնության (զանգահարելու թեժ գիծ, այցելելու որևէ կայք կամ խորհրդատվական կենտրոն) և օգտվելու հասանելի իրավական պաշտպանության միջոցներից,
- խրախուսի ականատեսներին միջամտելու և արտահայտվելու, եթե նրանք դարձել են բռնության վկաներ,
- խրախուսի քաղաքացիներին աջակցելու նոր օրենքի առաջարկին կամ գոյություն ունեցող օրենսդրության կիրառմանը:

Կարևոր է նաև նկատի ունենալ, որ բնակչության որոշակի հատվածների համար տեղեկատվությունը պետք է հասանելի լինի իրենց հասկանալի լեզվով, որը կարող է և չլինել երկրի կամ տարածաշրջանի պաշտոնական լեզուն:<sup>33</sup>

Թիրախային խմբերի հետ, ինչպես նաև գոհերի հետ, հաղորդագրությունների նախնական թեստավորումը կօգնի ապահովելու դրանց արդյունավետությունը թիրախային լսարաններում և կօգնի կանխարգելելու առանց դիտավորության հասցրած վնասը:

---

<sup>33</sup> Տես՝ Դանիայի կառավարության 2003թ Խախտեք լռությունը արշավը, որը մեկնարկել էր տարբեր լեզուներով. <http://eige.europa.eu/content/stop-violence-against-women-break-the-silence-0>:

## Հաղորդագրություններ տալու միջոցներ և ՁԼՄ – ներ

Իրազեկության բարձրացման արշավների և ծրագրերի համար միջոցների և ՁԼՄ-ների ընտրությունը կախված է մի շարք գործոններից: Դրանց նպատակահարմարությունը լսարաններին իրենց խոսքը հասցնելու առումով առանցքային գործոն է, բայց ուրիշները, ինչպես օրինակ (ֆինանսական) ռեսուրսների առկայությունը հավասարապես համարժեք կլինի: Պետք է նկատի առնվեն կապի միջոցների և մոտեցումների լայն շրջանակ ունենալու անհրաժեշտությունը:

### **Կապի միջոցներ**

Դասական մարքեթինգային ալիքները հաճախ օգտագործվում են իրազեկության բարձրացման արշավներում՝ միտված բնակչության լայն շերտերին հասանելի լինելուն: Սոցիալական գովազդները հեռուստատեսությամբ, ռադիոյով կամ տպագիր լրատվամիջոցներում մեծ ժողովրդականություն են վայելում, ինչպես և գովազդային պաստառները՝ հասարակական վայրերում (ինչպես օրինակ՝ գովազդային վահանակները գլխավոր հրապարակներում, ավտոբուսային կանգառներում, երկաթուղային կայարաններում և այլն), թռուցիկների, բացիկների և այլնի բաժանումը: Այս կապուղիների օգտագործումը սովորաբար պահանջում է կամ զգալի բյուջե կամ անհատույց օգտվելու պայմանավորվածություն մեդիա - ընկերությունների հետ: Մեկ այլ լուծում կարող է լինել փնտրել մի

ինքնատիպ, այլընտրանքային զանգվածային լրատվամիջոց իրազեկության բարձրացման ուղերձներ հաղորդելու համար, ինչպես որ դա արվել է Թուրքիայում (հագուստի պիտակները) և Գերմանիայում (գրպանի անձեռոցիկների փաթեթները և հացաբուլկեղենի տոպրակները, տես ստորև):

## Գերմանիա

Հացաբուլկեղենի տոպրակների արշավներ .  
<<Բռնաբարություն/բռնություն - ոչ իմ տոպրակի մեջ>><sup>34</sup>

(“Vergewaltigung/Gewaltkommt nicht in die Tute”)

2001թ Սաարբրյուքեն (Գերմանիա) քաղաքի իշխանությունները միացան և աջակցեցին սեռական բռնության դեմ իրազեկության բարձրացման արշավին, որը նախաձեռնել էին տեղի քաղաքացիական հասարակության մասնագիտացված կազմակերպությունները (բռնաբարության ճգնաժամային կենտրոնը և ընտանիքի պլանավորման ասոցիացիան): Արշավը դիմել էր ոչ ստանդարտ միջոցի տեղական բնակչությանը փաստացի տվյալների և վիճակագրության հաղորդման համար, ինչը հերքում էր սեռական բռնության շուրջ եղած առասպելները և տեղեկացնում գոյություն ունեցող թեժ գծերի մասին սեռական բռնության գոհ դարձած անձանց: Տեղեկատվությունը տպագրված էր

<sup>34</sup> <<Ոչ իմ տոպրակի մեջ>>՝ գերմաներեն դարձված է, որ նշանակում է <<ոչ մի դեպքում>> կամ <<չի սատարում ինչ-որ բանի>>:

գերմանական փոերում հաց և խմորեղեն վաճառելու համար սովորաբար օգտագործվող թղթե տոպրակների երեսի մասում: Թղթե տոպրակների հետևի մասում տեղեկատվություն էր տրված թեմային վերաբերող միջոցառումների օրացույցի մասին, որոնք տեղի էին ունեցել երկամսյա ժամկետի ընթացքում, որի ժամանակ այդ թղթե տոպրակները բաժանվել էին քաղաքի և տարածաշրջանի փոերում: Արշավը Կանանց նկատմամբ բռնության վերացման պայքարի միջազգային օրվա, նոյեմբերի 25-ի, առթիվ տեղական իշխանությունների եզրափակիչ գործողությունների մաս էր կազմում և իր գազաթնակետին հասավ հենց այդ օրը: Առանց որևէ ցնցող պատկերների կամ խոսքերի, ուղերձը <<խորը տպավորություն էր թողնում>>, քանի որ ներկայանում էր անսպասելի համատեքստում և շատերի համար հենց առաջին բանն էր, որ առավոտյան նախաճաշի համար հաց և խմորեղեն գնելիս, գրավում էր նրանց ուշադրությունը: Մեռական բռնության մասին տեղեկատվության տարածման այս ոչ ստանդարտ մոտեցումը՝ առօրյա պարագայի օգտագործմամբ, որը կապված է սննդի հետ և հաճախ է հայտնվում մարդկանց սեփական խոհանոցում, ոչ միայն բուռն քննարկումների տեղիք տվեց հաճախորդների շրջանում, այլև հրավիրեց լրատվամիջոցների ուշադրությունը, դրանով իսկ ավելացնելով արշավի թողած ազդեցությունը: Բռնաբարության ճգնաժամային կենտրոնը հատկապես գնահատեց այդ հնարավորությունը լայնորեն և դյուրին ճանապարհով տարածելու թեժ գծի իրենց հեռախոսահամարը: Դրանից հետո նման արշավներ կրկնվել են ինչպես Գերմանիայում, այնպես էլ նրանից դուրս և Գերմանիայի որոշ ինքնավար շրջաններում կամ „Londer,, - ներում



վերածվել ամենամյա արշավի: Հետագա տարիներին այդ արշավը <<ճյուղավորվեց>>. այլ արշավների ժամանակ կիրառվեցին այլ ոչ ստանդարտ <<լրատվամիջոցներ>> (օրինակ՝ անձեռոցիկների փաթեթներ դեղատներում):

Ստեղծագործական, գեղարվեստական միջոցների կիրառումը կարող է ավելի հզոր գործիք հանդիսանալ որևէ ուղերձ հաղորդելու համար և տարբեր մակարդակների լսարանների ուշադրությունը գրավելու տեսանկյունից, քան պարզապես փաստացի տվյալների տարածումը: Իտալիայում իրենց (նախկին) գուգրնկերների կողմից սպանված կանանց մասին պատմությունների վրա հիմնված „Ferite A Morte,, (Մահացու վիրավոր) թատերական նախագիծը ծառայում է որպես օրինակ, թե ինչպես արվեստը կարող է կանանց նկատմամբ բռնության ծայրահեղ հետևանքի՝ մահվան մասին իրազեկության բարձրացման միջոց հանդիսանալ:<sup>35</sup>

---

<sup>35</sup> Իտալիայի Արտաքին գործերի նախարարության հովանավորությամբ իրականացվող ծրագիր, ավելի մանրամասն տես՝ <http://feriteamorte.it/eng/blessed-to-death/>.

## Մուրհանդակներ

Որևէ կոնկրետ լսարանի համար առավել լսելի ձայն ունեցող հեղինակավոր անձանց օգնությամբ հնարավոր է ուղերձի շուրջ հրավիրել ինչպես տվյալ թիրախային լսարանի, այնպես էլ զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը, ինչն իր հերթին կարող է օգտակար լինել ավելի լայն լսարանին հասանելի լինելու համար: Նման օրինակ է թուրքական բարձրագույն լիգայի ֆուտբոլային ակումբի<sup>36</sup>, ինչպես նաև վրացական ռեգբիի թիմի<sup>37</sup> ներգրավումը տղամարդկանց և տղաների ուշադրությունը գրավելու համար: Այն դեպքում, երբ թիրախային լսարանը դեռահասներն են, էստրադային երգիչների և հանրաճանաչ դերասանների ներգրավումը, որպես թեմայի բարձրաձայնման անհատների, կարող է արդյունավետ լինել նրանց հասանելի լինելու համար:

Խորհրդականները և կառավարության բարձրաստիճան պաշտոնյաները նույնպես կարող են կարևոր դեր խաղալ ուղերձը տարածելու առումով իրենց ընտրատարածքներում, իրենց գործընկերների շրջանում և այլն: Այլ լսարանների համար լավագույն մուրհանդակներ կարող են լինել ոլորտի փորձագետները՝ հետազոտողները և պրակտիկ աշխատողները:

Անհատական պատմությունները և բոնությունից տուժած անձանց վկայությունները (գոհերի,

---

<sup>36</sup> UNFPA (2007), նշ. աշխ. (Թուրքիայի գործի ուսումնասիրությունը, էջ 57 f.)

<sup>37</sup> UN Women Georgia (2011), (2011), նշ. աշխ.

հանցագործների, ընտանիքի անդամների և այլոց) կարող են ուղերձի փոխանցման հզոր միջոց հանդիսանալ: Սակայն ամեն դեպքում գոհերի վկայությունների կամ գոհերի հետ աշխատելիս կարևոր է առաջնահերթությունը տալ էթիկական նկատառումներին (տես վերը):

## **Ընտրել ճիշտ տեղը և ժամանակը**

Միջազգային կամ ազգային օրերը, ինչպես նաև նոր տվյալներ պարունակող զեկույցների հրապարակումը, ապացուցել են իրենց արդյունավետությունը որպես <<կարթեր>>, երբ նպատակաուղղվում են իրազեկության բարձրացմանը նվիրված միջոցառման նկատմամբ լրատվամիջոցների կողմից լուսաբանման հետաքրքրության առաջացմանը:<sup>38</sup>

Հատուկ մասնագիտական խմբերի և քաղաքականություն մշակողների շրջանում իրազեկության բարձրացման համար հատկապես ընտրված միջոցառումները, ինչպես օրինակ՝ փորձագիտական խմբի քննարկումները, ձեպագրույցները և այլն կարող են առավել արդյունավետը լինել:

---

<sup>38</sup> Միջազգային օրերը հաճախ օգտագործվում են արշավներին կամ միջոցառումներին մեկնարկ տալու համար. Կանանց միջազգային օրը (մարտի 8-ը), Կանանց նկատմամբ բռնության վերացման միջազգային օրը (նոյեմբերի 25-ը) և Մարդու իրավունքների օրը (դեկտեմբերի 10-ը - այս երկու օրերի միջև ընկած ժամանակահատվածը կազմում է միջազգային <<Գենդերային բռնության դեմ ակտիվ պայքարի 16 օրերը>>), Կանանց սեռական անդամների խեղման համար զրո հանդուրժողականության միջազգային օրը (փետրվարի 6-ը), Վալենտինի օրը / V - օրը (փետրվարի 14 -ը):

Վերջին տարիներին աստիճանաբար աճում է առցանց կապի և սոցիալական լրատվամիջոցների դերը կոմերցիոն, ինչպես նաև սոցիալական մարքեթինգի բնագավառում՝ հատկապես երիտասարդ լսարանների համար: Երբ իրազեկության բարձրացման համար քննարկում ենք նոր և սոցիալական լրատվամիջոցների կիրառման հարցը, պետք է, այնուամենայնիվ, նշել, որ դեռևս դրա հետևանքների և ազդեցության մասին գոյություն ունի սահմանափակ փաստացի բազա:

## **(Սոցիալական) լրատվամիջոցներ. խնդրի՞ մի մաս, թե՞ լուծման**

Իրազեկության բարձրացման համար (սոցիալական) լրատվամիջոցների օգտակարությունը գնահատելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ դրանք կարող են ոչ նպաստավոր դեր խաղալ առասպելների և կարծրատիպերի արմատավորման, ինչպես նաև կնաստյացությանը և բռնությանը վերաբերող բովանդակությամբ նյութեր և այն արդարացնող դիրքորոշումներ տարածելու գործում: Այն կարող է ծառայել նաև որպես մի հարթակ, որտեղ կանայք և աղջիկները կարող են դառնալ բռնության նոր ձևերի, օրինակ՝ կիբեր հետապնդման, թիրախների: Իրազեկության բարձրացման գործում (նոր) լրատվամիջոցների օգտակարությունը նկատի առնելիս այս գործոններն անհրաժեշտ է հաշվի առնել:<sup>39</sup>

---

<sup>39</sup> Տես՝ (2013) Եվրոպայի խորհրդում նոր սոցիալական լրատվամիջոցների առաջացրած մարտահրավերների և հնարավորությունների հարցի շուրջ կայացած բանավեճի նյութերը, Media and the image of women, Եվրոպայի խորհրդի Ազգային համակարգող կենտրոնների ցանցի գենդերային հավասարության մասին 1 -ին գիտաժողովի զեկույցը, Ամստերդամ, 4-5-ը

Լրատվամիջոցները պետք է կազմեն <<լուծման մաս>>, այլ ոչ <<խնդիրների հարուցման մաս>>:

Լրատվամիջոցների ոլորտի մասնագետների իրազեկության բարձրացումը կանանց նկատմամբ բռնության բոլոր ձևերի վերաբերյալ առանցքային նշանակություն ունի, ինչի միջոցով կարելի է ձեռք բերել լայն ազդեցություն ունեցող լծակներ: Ապահովելով կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի մասին որակյալ և ճշգրիտ խմբագրական լուսաբանում, ինչպես նաև կանանց նկատմամբ բռնությունն արդարացնող կամ առասպելների վրա հիմնված տեղեկություններ արմատավորող տեսանյութերից և ուղերձներից խուսափելու անհրաժեշտության վերաբերյալ լրատվամիջոցների մասնագետների իրազեկության բարձրացումը, կարող է ավելի արդյունավետ լինել ավելի լայն լսարանի իրազեկության բարձրացման համար, քան առաջատար լրատվամիջոցներում գովազդ տեղակայելը: Թուրքիայում լրագրողների ազգային ֆեդերացիայի հետ հաջողված համագործակցության արդյունքում հնարավորություն ստեղծվեց լրագրողների համար կանանց նկատմամբ բռնության թեմայի շուրջ դասընթացներ անցկացնել և երիտասարդ լրագրողներին շնորհվող մրցանակի միջոցով խրախուսել խնդրի ավելի որակյալ լուսաբանում:<sup>40</sup> Կանանց նկատմամբ բռնության վերաբերյալ լրատվական միջոցների կողմից

---

հուլիսի, 2013թ, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ, հատկապես 9 - 10 էջերը:

<sup>40</sup> Տես՝ <<Կանգնեցնել կանանց նկատմամբ բռնության արշավը Թուրքիայում>> հատվածը վերը, էջ և UNFPA (2006), նշ. աշխ.

պատասխանատու լուսաբանման մասին ձեռնարկները, ինչպես օրինակ՝ Ջրո հանդուրժողականության<sup>41</sup>, DART եվրոպական կենտրոնի<sup>42</sup> և Լրագրողների միջազգային ֆեդերացիայի<sup>43</sup> կողմից պատրաստվածը նույնպես կարող են կարևոր դեր խաղալ լրագրողների իրազեկության բարձրացման համար: Իրենց հերթին, զանգվածային լրատվամիջոցները ավելի բարձրակարգ լրատվություն տրամադրելով, այդ թվում ճշգրիտ տերմինաբանությունն օգտագործելու միջոցով, բայց և խուսափելով <<զեղեցկացնելուց, շքեղացնելուց կամ կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի մասին անհասկանալի կամ ոչ ճշգրիտ եզրույթներ օգտագործելուց>>,<sup>44</sup> ինչպես նաև կանանց նկատմամբ բռնության հիմնախնդրին մարտահրավեր նետող

---

<sup>41</sup> Ջրո հանդուրժողականություն (Zero Tolerance), Handle with care: a guide to responsible media reporting of violence against women, հասանելի է՝ [www.zerotolerance.org.uk/sites/all/files/HWC\\_V5\(1\).pdf](http://www.zerotolerance.org.uk/sites/all/files/HWC_V5(1).pdf).

<sup>42</sup> DART Centre Europe (2011), Reporting on sexual violence. A DART Centre tip sheet, հասանելի է՝ [http://dartcenter.org/files/sexual%20violence%20tipsheet\\_final\\_27.08.11.pdf](http://dartcenter.org/files/sexual%20violence%20tipsheet_final_27.08.11.pdf)

<sup>43</sup> Լրագրողների միջազգային ֆեդերացիա (2009), „Guidelines for reporting on violence against women, հասանելի է՝ <http://ethicaljournalisminitiative.org/en/contents/if-guidelines-for-reporting-on-violence-against-women>

<sup>44</sup> Տե՛ս՝ մեդիա կազմակերպությունների Եվրոպայի խորհրդում (2013) կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի մասին լուսաբանման ժամանակ ճշգրիտ տերմինաբանություն օգտագործելու համար տրված հանձնարարականները, Media and the image of women, նշ. աշխ., հատկապես 21 էջը, հասանելի է՝ <http://www.womenlobby.org/news/new-resources/article/council-of-europe-media-and-the?lang=en>.

կազմակերպություններին և անհատներին եթերային ժամանակ տրամադրելով կարող են մեծ ազդեցություն ունենալ իրենց լսարանների իրազեկության բարձրացման գործում: Այդ պատճառով է, որ Ստամբուլի կոնվենցիայի 17-րդ հոդվածը մասնակից պետություններին կոչ է անում խրախուսել իրենց զանգվածային լրատվամիջոցներին ակտիվ դերակատարում ունենալ կանանց նկատմամբ բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարելու գործում:

## **Եզրակացություն**

Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության երևույթների, ինչպես նաև երեխաների վրա դրանց ազդեցության մասին ավելի բարձր իրազեկվածությունը և դրանց ճշգրիտ ընկալումը նախապայման են հանդիսանում վերաբերմունքի և վարքի փոփոխման համար: Ուստի դա կարող է կարևոր դեր խաղալ որպես համապարփակ կանխարգելման ռազմավարության բաղկացուցիչ մաս: Արդյունավետ լինելու համար կարևոր է ապահովել, որպեսզի իրազեկության բարձրացման արշավները կամ ծրագրերը մշակված լինեն որպես կանանց նկատմամբ բռնության վերացման համապարփակ, կայուն մոտեցման անբաժանելի մաս, ինչպես օրինակ, գործողությունների ազգային ծրագիրը և որ դրանք ապահովված լինեն անհրաժեշտ ֆինանսական միջոցներով: Իրատեսական նպատակներ, թիրախներ և արդյունքների գնահատման միջոցներ և ճանապարհներ սահմանող հստակ շրջանակի առկայությունը նույնքան կարևոր է, որքան և գործընկերների ընտրությունը, ինչպիսին են օրինակ՝

քաղաքացիական հասարակության կազմակերպությունները և համապատասխան փորձառությամբ այլ գործընկերները, մասնավորապես կանանց նկատմամբ բռնության վերացման մեջ մասնագիտացած կանանց ՀԿ-ները:

Հիմնվելով առկա գիտելիքների և փորձի վրա և նկատի ունենալով կանխարգելման վերաբերյալ կոնվենցիայով նախատեսված լրացուցիչ պարտավորությունների փոխլրացնող և համալիր բնույթը, հնարավոր է մշակել տեղական և ազգային տարբեր պահանջներին բավարարող իրազեկության բարձրացման արդյունավետ նախաձեռնություններ:

### **Իրազեկության բարձրացման արշավների ստուգաթերթ**

Իրազեկության բարձրացման արշավներ կարող են նախաձեռնվել տարբեր դերակատարների կողմից՝ անհատապես կամ համատեղ գործունեության արդյունքում, սկսած բոլոր մակարդակների (տեղական, տարածաշրջանային, ազգային) իշխանության ճյուղերից մինչև ոչ-կառավարական և քաղաքացիական հասարակության կազմակերպություններ: Առաջին անգամ Ստամբուլի կոնվենցիայի 13-րդ հոդվածով մասնակից պետությունների համար իրավական պարտավորություն է սահմանվել, այսինքն՝ կառավարությունների համար, կանոնավոր հիմունքներով իրականացնել իրազեկության բարձրացման նախաձեռնություններ: Հետևյալ ստուգաթերթը կարող է օգտակար լինել իրազեկության բարձրացման որևէ արշավ կամ միջոցառում մշակելիս



և իրականացնելիս .

◊ Արդյո՞ք արշավը հիմնված է կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության վերաբերյալ գենդերային և մարդու իրավունքներից բխող հստակ սահմանման պատկերացումների վրա (այսինքն՝ արդյո՞ք այն նկատի է առնում և անդրադառնում հիմքում ընկած այնպիսի խնդիրների, ինչպիսին են գենդերային անհավասարությունը և խտրականությունը, բռնությունը հանդուրժող նորմերը և գենդերային վնասակար կարծրատիպերը և այլն):

◊ Արդյո՞ք արշավը կանանց նկատմամբ բռնության դադարեցմանն ուղղված համապարփակ մոտեցման անբաժանելի մասն է կազմում, ինչպես օրինակ՝ գործողությունների ազգային պլանը կամ ծրագիրը և արդյո՞ք այն ծրագրված է որպես կայուն, երկարաժամկետ նախաձեռնություն:

◊ Արդյո՞ք արշավը հիմնված է տրամաբանական մոդելի վրա, ունի հստակ նպատակներ, թիրախներ, արդյունքների գնահատման ցուցանիշներ և արդյո՞ք այն ներառում է մշտադիտարկման և գնահատման շրջանակ:

◊ Արդյոք արշավը հիմնված է հետևյալ հարցերի վերաբերյալ հետազոտության և տվյալների/գիտելիքների վրա՝  
○ ինչպես է գործում իրազեկության բարձրացումը  
(այսինքն՝ իրատեսական առումով ինչ արդյունքների այն կարող է հասնել, ինչի՞ ոչ),  
○ թեման,  
○ թիրախային խումբը,

○ թիրախային խմբին հասցվող ուղերձի  
Լավագույն տարբերակը (<<Ի՞նչ լսելու  
անհրաժեշտություն  
նրանք ունեն>>),

○ թիրախային խմբին հասանելի լինելու  
լավագույն ճանապարհը (<<Ինչպե՞ս ուղերձը  
նրանց համար լսելի դարձնել>>),

◇ Այն դեպքում, երբ տվյալները բացակայում են,  
արդյո՞ք իրազեկության բարձրացման  
միջոցառում մեկնարկելու ծրագիրը  
նախատեսում է հետազոտություն  
իրականացնելու հնարավորություն վերոհիշյալ  
հարցերը պարզելու համար (թե՛մա, թիրախային  
խումբ, նրանց հասանելի լինելու լավագույն  
ճանապարհը և այլն),

◇ Հատկացվե՞լ են արդյոք բավարար ֆինանսական  
միջոցներ իրականացնելու համար այն  
միջոցառումները, որոնք անհրաժեշտ են  
արշավի նպատակներին հասնելու համար  
(ներառյալ մշտադիտարկումն ու գնահատումը),

◇ Ներառվե՞լ են արդյոք կանանց նկատմամբ  
բռնության հարցի փորձագետները  
(մասնավորապես կանանց  
կազմակերպությունները, ներառյալ բռնության  
զոհերի հետ աշխատողները), ինչպես նաև  
հացորդակցության փորձագետները, ծրագրի  
նախապատրաստման փուլում:

◇ Արդյո՞ք որոշված է այն հատուկ թեման կամ  
կանանց նկատմամբ բռնության ձևը, որին  
արշավը մտադիր է անդրադառնալ  
(երաշխավորելով, որ երկարաժամկետ  
հեռանկարում այն հասցեագրվելու է կանանց

նկատմամբ բռնության բոլոր ձևերին և երեխաների վրա դրա թողած հետևանքներին):

- ◇ Արդյո՞ք արշավը համապատասխանում է ազգային/տարածաշրջանային/ տեղական պահանջներին:
- ◇ Արդյո՞ք ընտրվել է հատուկ թիրախային լսարան . բռնության վտանգի տակ գտնվող կամ արդեն իսկ բռնության ենթարկված կանայք, բռնության ականատեսներ, հանցագործներ, տարբեր տարիքային խմբեր, տարբեր մասնագիտական խմբեր (երաշխավորելով, որ երկարաժամկետ հեռանկարում հանրության բոլոր անդամները ներառված կլինեն):
- ◇ Արդյո՞ք ընտրված միջոցները և ՁԼՄ-ները, ինչպես նաև ժամկետները և տեղաբաշխումը, համապատասխանում են թիրախային լսարանին հասանելի լինելու մտադրությանը:
- ◇ Արդյո՞ք արշավը ներառում է առաջարկություններ կոնկրետ գործողության/շարունակության/ փոփոխության վերաբերյալ թիրախային խմբի համար:
- ◇ Արդյո՞ք հաշվի են առնվել էթիկական խնդիրները, այսինքն՝ արդյո՞ք ուշադրություն է դարձվել հաղորդագրություններին և փոխանցվող պատկերներին (ինչպես օրինակ՝ դրական, ոգեշնչող ուղերձներ փոխանցելու, կանանց մասին որպես պասիվ գոհերի, իսկ տղամարդկանց մասին որպես հանցագործների կարծրատիպեր ստեղծելուց խուսափելու տեսանկյունից):
- ◇ Արդյո՞ք կանանց նկատմամբ բռնության մասին

տեղեկատվության տարածման կանոնների  
վերաբերյալ արդեն իսկ  
գոյություն ունեցող հանձնարարականները,  
ուղենիշները և ստուգաթերթերը  
հաշվի են առնվել:

- ◇ Արդյո՞ք արշավի ուղերձը փոխանցելու համար  
ընտրվել են ստեղծարար, նորարարական  
միջոցներ:
- ◇ Արդյո՞ք նկատի է առնվել հանրաճանաչ անձանց և  
<<ղեկավարների>> ներգրավումը, քանի որ նրանք  
արդյունավետորեն նպաստել են որոշակի խմբերին  
հասանելի լինելու գործին:
- ◇ Արդյո՞ք հստակ կերպով գնահատվել են, թե ինչպես  
է պետք ներգրավել լրատվամիջոցները, և արդյո՞ք  
անհրաժեշտ է առաջին հերթին ձեռնամուխ լինել  
լրատվամիջոցների ոլորտում որոշումներ  
կայացնողների և լրագրողների իրազեկության  
բարձրացման գործին, թե՛ ոչ:

# Հիմնական ռեսուրսներ

## Իրազեկության բարձրացման արշավները և նախաձեռնությունները Եվրոպայում

**Կ**անանց նկատմամբ բռնության տարբեր տեսակների դեմ ինչպես կառավարությունների, այնպես էլ ՀԿ-ների կողմից նախաձեռնած և իրականացրած արշավների մի շարք ոգեշնչող օրինակներ հասանելի են առցանց: Սա Եվրոպայում կանանց նկատմամբ բռնության դեմ իրազեկության բարձրացման համար ձեռնարկված առկա մոտեցումների ոչ ամբողջական հավաքածուն է:

### 1. Եվրոպայի խորհուրդ

Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի, ներառյալ ընտանեկան բռնությունը, 2006-2008թթ արշավը, գործունեության վերջնական հաշվետվություն<sup>45</sup>

### 2. Եվրոպայի կանանց լոբբի

<<Կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու համար իրազեկության բարձրացում. հաջողված արշավներ>> թեմայով պաստառների և տեսահոլովակների հավաքածու<sup>46</sup>

---

<sup>45</sup> Տես՝ [www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/finalActivityreport.pdf](http://www.coe.int/t/dg2/equality/domesticviolencecampaign/Source/finalActivityreport.pdf).

<sup>46</sup> Տես՝ [www.womenlobby.org/Get-involved/EWL-Campaigns/a-european-year-to-end-violence/raising-awareness-to-end-violence/?lang=en](http://www.womenlobby.org/Get-involved/EWL-Campaigns/a-european-year-to-end-violence/raising-awareness-to-end-violence/?lang=en).

Մա կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերի մասին պաստառների և տեսահոլովակների հավաքածու է, ներառյալ՝ բռնաբարությունը, ընտանեկան բռնությունը, թրաֆիքինգը, <<պատվի>> սպանությունները, մարմնավաճառությունը, կանացի սեռական օրգանների խեղումը, փողոցային հետապնդումը և հարկադիր ամուսնությունը: Մակայն, գոյություն չունեն չափանիշներ, թե ինչպես են չափվել կամ գնահատվել նրանց կողմից արձանագրված հաջողությունները:

Պայքար բռնաբարության դեմ. Կիրառել Ստամբուլի կոնվենցիան.

Եվրոպայի խորհրդի և Եվրոպայի կանանց լոբբիի 2013թ համատեղ նախագիծը հանգեցրեց մի շարք նյութերի ստեղծմանը, որոնք կարող են հետազայում կիրառվել բռնաբարության դեմ անցկացվող արշավներում, մասնավորապես Գործողությունների համալիր ծրագրում:

### **3. Եվրոպական հանձնաժողով**

Եվրոպական հանձնաժողով (2012), Գենդերային հավասարության վերաբերյալ դրական փորձի փոխանակում. կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարի իրազեկության բարձրացման միջոցառումները: Ամփոփ հաշվետվություն, Եվրոպական հանձնաժողով (Արդարադատության

---

հարցերով գլխավոր տնօրինություն), ՄԹ<sup>47</sup>

#### **4. Գենդերային հավասարության եվրոպական ինստիտուտ**

Կառավարությունների և ՀԿ-ների կողմից սեռական բռնության վերաբերյալ իրականացրած իրազեկության բարձրացման արշավներ:<sup>48</sup>

Եվրամիությունում կանանց նկատմամբ սեռական բռնության խնդրի հետազոտության արդյունքում ստեղծվել է տվյալների բազա, որը ներառում է կառավարությունների և ՀԿ-ների կողմից սեռական բռնությունների վերաբերյալ իրականացրած իրազեկության բարձրացման մասին տեղեկատվությունը:

<<Ընտանեկան բռնության կանխարգելման և դրանից պաշտպանվելու մեթոդները և գործիքները>><sup>49</sup>

Սա կառավարությունների և ՀԿ-ների կողմից իրականացրած իրազեկության բարձրացման գործունեությանն ուղղված տվյալների բազան է:

<<Կանացի սեռական օրգանների խեղման խնդրի

---

<sup>47</sup> Տե՛ս՝ [http://ec.europa.eu/justice/gender-equality/other-institutions/good-practices/review-seminars/seminars\\_2012/violence\\_en.htm](http://ec.europa.eu/justice/gender-equality/other-institutions/good-practices/review-seminars/seminars_2012/violence_en.htm).

<sup>48</sup> Տե՛ս՝ <http://eige.europa.eu/content/sexual-violence>.

<sup>49</sup> Տե՛ս՝ <http://eige.europa.eu/methods-and-tools/domestic-violence?title=&foc%5B%5D=697>.

վերաբերյալ մեթոդներ և գործիքներ>><sup>50</sup>

Սա կառավարությունների և ՀԿ-ների կողմից իրականացրած՝ իրազեկության բարձրացման գործունեությանն ուղղված տվյալների բազան է:

## **5. Կանանց և տղամարդկանց համար հավասար հնարավորությունների ապահովման խորհրդատվական կոմիտե**

Կարծիք՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ Եվրամիության կողմից իրազեկության բարձրացման հնարավոր արշավի մասին<sup>51</sup>

Փաստաթուղթը ներառում է հավելված Եվրամիության անդամ պետությունների կողմից իրազեկության բարձրացման արշավների դրական գործելակերպի վերաբերյալ:

## **6. Միավորված ազգերի կազմակերպության գեներային հավասարության և կանանց իրավունքների ընդլայնման ստորաբաժանում (ՄԱԿ-ի կանայք)**

ՄԱԿ-ի կանայք ստորաբաժանման վիրտուալ գիտելիքների կենտրոնի՝ Կանանց նկատմամբ

---

<sup>50</sup> Տես՝ <http://eige.europa.eu/methods-and-tools/female-genital-mutilation?title=&cat%5B%5D=570>.

<sup>51</sup> Տես՝ [http://ec.europa.eu/justice/gender-equality/fles/opinions\\_advisory\\_committee/opinion\\_on\\_a\\_possible\\_eu\\_awareness\\_raising\\_campaign\\_on\\_violence\\_against\\_women\\_and\\_girls\\_\(vawg\)\\_en.pdf](http://ec.europa.eu/justice/gender-equality/fles/opinions_advisory_committee/opinion_on_a_possible_eu_awareness_raising_campaign_on_violence_against_women_and_girls_(vawg)_en.pdf).



բռնությանը վերջ դնելու արշավների մասին ակնարկը<sup>52</sup>

Այս հավաքածուն ներառում է Եվրամիության անդամ պետությունների կողմից իրականացրած որոշ արշավների նյութեր:

## **Կանանց նկատմամբ բռնության մասին հաղորդակցության ուղեցույցներ**

---

UNIFEM (2001): *Պատկերել բռնությունից ազատ կյանք. կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու ՁԼՄ-ների հաղորդակցության ռազմավարությունը*<sup>53</sup>

Այս հավաքածուն հասանելի է առցանց անգլերեն և իսպաներեն լեզուներով և ներառում է օրինակներ Եվրամիության անդամ պետություններից:

UNIFEM (2003): *Փոփոխություն կատարել. ռազմավարական հաղորդակցություն կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու համար*<sup>54</sup> (հասանելի է անգլերեն և ռուսերեն լեզուներով)

Զրո հանդուրժողականություն. Վերաբերվել խնամքով. ուղեցույց պատասխանատու լրատվամիջոցների

---

<sup>52</sup> Տե՛ս՝ [www.endvawnow.org/en/articles/158-campaigns.html](http://www.endvawnow.org/en/articles/158-campaigns.html).

<sup>53</sup> Տե՛ս՝ [www.endvawnow.org/en/tools/view/431-picturing-a-life-free-of-violence-media-communication-strategies-to-end-violence-against-women-2001.html](http://www.endvawnow.org/en/tools/view/431-picturing-a-life-free-of-violence-media-communication-strategies-to-end-violence-against-women-2001.html).

<sup>54</sup> Տե՛ս՝ [www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html](http://www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html).

համար, որոնք լուսաբանում են կանանց նկատմամբ բռնության դեպքերը<sup>55</sup>

Եվրոպայի ԴԱԸԹ (DART) կենտրոն (2011). Զեկույցներ սեռական բռնության մասին. Եվրոպայի ԴԱԸԹ կենտրոնի խորհուրդների թերթիկը<sup>56</sup>

Լրագրողների միջազգային ֆեդերացիա (2008). Կանանց նկատմամբ բռնության լուսաբանման ուղեցույցներ<sup>57</sup>

COSC(2013). Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության հասկացության խթանմանը և զարգացմանը ուղղված մոտեցումների հաղորդակցության փաստաթուղթ<sup>58</sup>

Կառավարության իրավահավասարության վարչություն (2009). <<Պայքար կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ. ուղեցույց դրական գործելակերպի մասին>>, Լոնդոն<sup>59</sup>

---

<sup>55</sup> Տե՛ս՝ [www.zerotolerance.org.uk/sites/all/files/fles/HWC V5\(1\).pdf](http://www.zerotolerance.org.uk/sites/all/files/fles/HWC V5(1).pdf)

<sup>56</sup> Տե՛ս՝ <http://dartcenter.org/fles/sexual%20violence%20tipsheet> final 27.08.11.pdf

<sup>57</sup> Տե՛ս՝ <http://ethicaljournalisminitiative.org/en/contents/if-guidelines-for-reporting-on-violence-against-women>.

<sup>58</sup> Տե՛ս՝ [www.cosc.ie/en/COSC/Communications%20paper%202013.pdf/Files/Communications%20paper%202013.pdf](http://www.cosc.ie/en/COSC/Communications%20paper%202013.pdf/Files/Communications%20paper%202013.pdf).

<sup>59</sup> Տե՛ս՝ [http://sta.geo.useconnect.co.uk/news/vaw\\_guidance.aspx](http://sta.geo.useconnect.co.uk/news/vaw_guidance.aspx).

# Մատենագիտություն

Brooks O. (2011), “Guys! Stop doing it! Young women`s adoption and rejection of safety advice when socialising in bars, pubs and clubs“, *British Journal of Criminology*, vol. 51, issue 4, pp. 635 – 651 (Տղաներ, դադարեցրեք անել դա, Երիտասարդ կանանց կողմից, բարերում, պանդոկներում և սկումբներում տղամարդկանց հետ շփվելիս, անվտանգությունը պահպանող խորհրդների ընդունումն ու մերժումը, Կրիմինալիստիկայի բրիտանական ամսագիր, հատոր 51, 4-րդ թողարկում, էջ. 635 - 651)

Cerise S. (2011), “A different world is possible: a call for long-term and targeted action to prevent violence against women and girls”, End Violence Against Women (EVAW) Coalition, London (Մեկ այլ աշխարհի հնարավոր է ստեղծել. կոչ՝ կանանց և աղջիկների նկատմամբ բռնությունը կանխելուն ուղղված երկարաժամկետ թիրախավորված գործողության համար, Կանանց նկատմամբ բռնությանը վերջ դնելու կոալիցիա, Լոնդոն)

COSC (2013), “Communications paper on approaches to promoting and developing an understanding of domestic, sexual and gender-based violence“, National Office for the Prevention of Domestic, Sexual and Gender-based Violence (COSC), Dublin (Հաղորդակցության փաստաթուղթ ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնություն հասկացության տարբեր մոտեցումների խթանման և զարգացման համար, Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության

կանխարգելման ազգային վարչություն, ԿՈՍԿ, Դուբլին)

COSC, “Guiding principles for public awareness-raising activities relating to domestic, sexual and gender-based violence“, National Office for the Prevention of Domestic, Sexual and Gender-based Violence (COSC), Dublin

(Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության հետ կապված հանրության իրազեկության բարձրացման գործողությունների ղեկավար սկզբունքներ, Ընտանեկան, սեռական և գենդերային հիմքով բռնության կանխարգելման ազգային վարչություն, ԿՈՍԿ, Դուբլին)

Council of Europe (2008), “Task Force to Combat Violence against Women, including Domestic Violence (EG-TFV)”, Council of Europe, Strasbourg (Աշխատանքային խումբ պայքարելու համար կանանց նկատմամբ բռնության դեմ, ներառյալ ընտանեկան բռնությունը, Եվրոպայի խորհուրդ, Ստրասբուրգ)

Concil of Europe (2011, “Council of Europe Convention on Preventing and Combating Violence against Women and Domestic Violence and explanatory report”, Council of Europe Publishing, Strasbourg (Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին և բացատրական զեկույց, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ)

Council of Europe (2013), *Media and the image of women*, Report of the 1st Conference of the Council of Europe Network of National Focal Points on Gender Equality,

Amsterdam, 4-5 July 2013 (ԶԼՄ-ները և կնոջ կերպարը, Գենդերային հավասարության ազգային կենտրոնների Եվրոպայի խորհրդի համացանցի 1-ին համաժողովի զեկույցը, 4-5 հուլիսի, 2013թ),

Council of Europe (2014), “Analytical study of the results of the fourth round of monitoring the implementation of Recommendation Rec(2002)5 on the protection of women against violence in Council of Europe member states“, prepared by Prof. R.Dr. Carol Hagemann-White, Council of Europe Publishing, Strasbourg (Վերլուծական ուսումնասիրություն Եվրոպայի խորհրդի մասնակից պետություններում կանանց բռնությունից պաշտպանելու մասին Rec(2002)5 Հանձնարարականի իրականացման մշտադիտարկման չորրորդ փուլի արդյունքների վերաբերյալ, պատրաստել է պրոֆեսոր Կարոլ Հագման-Ուայթը, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ)

DART Centre Europe (2011), “Reporting on sexual violence“, a DART Centre Europe tip sheet (Հաշվետվություններ սեռական բռնության վերաբերյալ), ԴԱԸԹ Եվրոպա կենտրոնի խորհրդատվական թերթիկ, հասանելի է՝ [http://dartcenter.org/files/sexual%20violence%20tipsheet\\_final\\_27.08.11.pdf](http://dartcenter.org/files/sexual%20violence%20tipsheet_final_27.08.11.pdf)

European Commission (2012), *Exchange of good practices on gender equality: awareness-raising activities to fight violence against women and girls. Summary report*, European Commission (Justice), UK [Եվրոպական հանձնաժողով (2012), Գենդերային հավասարության վերաբերյալ դրական փորձի փոխանակում. կանանց և

աղջիկների նկատմամբ բռնության դեմ պայքարի իրազեկության բարձրացման գործունեությունը: Ամփոփ հաշվետվություն, Եվրոպական հանձնաժողով (Արդարադատություն), ՄԹ]

European Commission Directorate-General for Communication (2010), *Eurobarometer 73.2: Domestic violence against women*, TNS Opinion & Social, Brussels [Եվրոպական հանձնաժողովի Հաղորդակցության հարցերով գլխավոր տնօրինություն, (2010), Եվրոբարոմետր 73.2. Կանանց նկատմամբ ընտանեկան բռնությունը, TNS Opinion & Social, Բրյուսել]

European Commission Directorate-General X for Information, Communication, Culture and Audiovisual Media (1999), *Eurobarometer 51.0. Europeans and their views on domestic violence against women*, Brussels [Եվրոպական հանձնաժողովի Տեղեկատվության, հաղորդակցության, մշակույթի և աուդիովիզուալ մեդիայի Գլխավոր տնօրինություն X (1999), Եվրոբարոմետր 51.0. Եվրոպացիները և նրանց տեսակետները կանանց նկատմամբ ընտանեկան բռնության մասին, Բրյուսել)

European Union Agency for Fundamental Rights (2014), *Violence against women: an EU-wide survey. Main results*, Publications Office of the European Union, Luxembourg (Եվրոպական միության հիմնարար իրավունքների գործակալություն (2014), Կանանց նկատմամբ բռնություն. ուսումնասիրություն Եվրամիության ողջ տարածքում: Հիմնական արդյունքները, Եվրամիության հրատակչություն, Լյուքսեմբուրգ)

Government Equalities Office (2009), *Tackling violence against women and girls. A guide to good practice communications*, London (Կառավարության իրավահավասարության վարչություն (2009), Պայքար կանանց և աղջիկների նկատմամբ բռնության դեմ: Հաղորդակցության դրական գործելակերպի ուղեցույց, Լոնդոն)

Hagemann-White C. et al. (2010), *Factors at play in the perpetration of violence against women, violence against children and sexual orientation violence - A multi-level interactive model* (part of the Feasibility study to assess the possibilities, opportunities and needs to standardize national legislation on gender violence and violence against children for the European Commission - JLS/2009/D4/018), Publications Office of the European Union, Luxembourg (Հագեման-Ուայթ Կ. եվ ուրիշներ, (2010), Կանանց նկատմամբ բռնության, երեխաների նկատմամբ բռնության և սեռական կողմնորոշման բռնության գործոնները – Բազմամակարդակ ինտերակտիվ մոդել (Իրագործելիության հետազոտության մաս՝ գնահատելու համար կարողությունները, հնարավորությունները և կարիքները, համապատասխանեցնելու համար ազգային օրենսդրությունը գենդերային հիմքով բռնության և երեխաների նկատմամբ բռնության մասով Եվրոպական հանձնաժողովի JLS/2009/D4/018 հանձնարարականին, Եվրամիության հրատարակչություն, Լյուքսեմբուրգ)

Heise L.L. (1998), “Violence against women: an integrated, ecological framework”, *Violence Against Women*, vol. 4, No. 3, pp. 262-290 (Բռնություն կանանց նկատմամբ.

միասնական, էկոլոգիական շրջանակ, հատոր 4, համար 3, էջ.262-290)

Hester M. and Lilley S.-J. (2014), *Preventing violence against women: Article 12 of the Istanbul Convention*, Council of Europe Publishing, Strasbourg (Կանխել բռնությունը կանանց նկատմամբ. Ստամբուլի կոնվենցիայի 12 -րդ հոդվածը, Եվրոպայի խորհրդի հրատարակություն, Ստրասբուրգ)

International Federation of Journalists (2009), “IJF Guidelines for reporting on violence against women” in *Getting the balance right: gender equality in journalism*, IFJ, Brussels (Լրագրողների միջազգային ֆեդերացիա, „ԼՄՖ-ի ուղենիշները կանանց նկատմամբ բռնության լուսաբանման վերաբերյալ, պահպանելու համար ճիշտ հավասարակշռությունը. գենդերային հավասարությունը լրագրության մեջ, ԼՄՖ, Բրյուսել)

Kitzinger J. (1994), “Challenging sexual violence against girls: a social awareness approach”, *Child Abuse Review*, Vol. 3, No. 4, pp. 246-248 (Քիցինջեր Ջ. (1994), „Պայքար աղջիկների նկատմամբ սեռական բռնության դեմ. սոցիալական իրազեկման մոտեցում, Երեխայի չարաշահման խնդիրների պարբերական հանդես, հատոր 3, համար 4, էջ. 246-248)

OSCE (2009), *Bringing security home: combating violence against women in the OSCE region. A compilation of good practices*, Gender Section, OSCE Secretariat, Vienna (Անվտանգ դարձրու տունդ. պայքար կանանց նկատմամբ բռնության դեմ ԵԱՀԿ-ի տարածաշրջանում: Դրական գործելակերպի ժողովածու, Գենդերային



հարցերի ենթաբաժին, ԵԱՀԿ-ի քարտուղարություն, Վիեննա)

UNFPA (2007), *Programming to address violence against women. 10 case studies*, United Nations Population Fund, New York, (ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ (2007), Նյու Յորք, Կանանց նկատմամբ բռնության դեմ պայքարի ծրագրեր: Դեպքերի 10 ուսումնասիրություն, հասանելի է [www.unfpa.org/public/global/pid/386](http://www.unfpa.org/public/global/pid/386))

UNIFEM (2001), *Picturing a life free of violence: media and communications strategies to end violence against women*, (Բռնությունից ազատ կյանքի նկարագրություն. ԶԼՄ-ների և հաղորդակցության ռազմավարությունը կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու գործում, հասանելի է առցանց անգլերեն և իսպաներեն լեզուներով, [www.endvawnow.org/uploads/browser/fles/Picturing%20a%20Life%20Free%20of%20Violence%20English.pdf](http://www.endvawnow.org/uploads/browser/fles/Picturing%20a%20Life%20Free%20of%20Violence%20English.pdf))

UNIFEM (2003), *Making a difference: strategic communications to end violence against women*, United Nations Development Fund for Women, New York (Փոփոխություն կատարել. ռազմավարական հաղորդակցություն կանանց նկատմամբ բռնությանը վերջ տալու համար, ՄԱԿ-ի բնակչության հիմնադրամ կանանց համար, Նյու Յորք, հասանելի է [www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html](http://www.endvawnow.org/en/tools/view/342-making-a-difference-strategic-communications-to-end-violence-against-women-2003.html))

UN Women (2011), “Final evaluation report: Enhancing Prevention and Response to Domestic Violence in Georgia-

ShiEld” (ՄԱԿ-ի Կանյաք (2011), Վերջնական գնահատման հաշվետվություն. նպաստել Վրաստանում ընտանեկան բռնության դեմ պայքարին և դրա կանխարգելմանը, ShiEld - ծրագիր), հասանելի է՝ [www.endvawnow.org/uploads/browser/files/shield\\_communications\\_report\\_fnal\\_fnal.pdf](http://www.endvawnow.org/uploads/browser/files/shield_communications_report_fnal_fnal.pdf))

UN Women`s Virtual Knowledge Centre on Ending Violence Against Women and Girls (2012), *Campaigns to end violence against women and girls*, UN Women (ՄԱԿ-ի Կանյաք կազմակերպության Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը վերջ տալու վիրտուալ գիտելիքների կենտրոն (2012), Կանանց և աղջիկների նկատմամբ բռնությանը վերջ տալու արշավներ), հասանելի է՝ [www.endvawnow.org](http://www.endvawnow.org), տես՝ Programming modules; campaigns)

WHO (2009), “Violence prevention: the evidence. Promoting gender equality to prevent violence against women” (Series of briefings on violence), World Health Organization (Առողջապահության միջազգային կազմակերպություն (2009), „Բռնության կանխարգելում. ապացույցներ: Աջակցել գենդերային հավասարությանը կանանց նկատմամբ բռնությունը կանխարգելելու համար,, - Բրիֆինգների շարք բռնության վերաբերյալ)

Zero Tolerance, *Handle with care: a guide to responsible media reporting of violence against women*, (Վերաբերվել ինամբով. կանանց նկատմամբ բռնության դեպքերի պատասխանատու լուսաբանման ուղեցույց լրատվամիջոցների համար, հասանելի է՝ [www.zerotolerance.org.uk/sites/all/files/HWC](http://www.zerotolerance.org.uk/sites/all/files/HWC))

V5(1).pdf

Հոդված 13 – Իրագեկույթյան քարտուրացում

1. Մասնակից պետությունները պետք է կանոնավոր հիմունքներով խթանեն կամ կազմակերպեն հանրային իրագեկման արշավները կամ ծրագրերի անցկացումը, այդ թվում, համապատասխան դեպքերում համագործակցելով մարդու իրավունքների ներպետական ինստիտուտներին և հսկող պետություն հարցերով լիազորված մարմիններին, քաղաքացիական հասարակություն և ՀԿ-ներին, հատկապես կանանց հարցերով զբաղվող կազմակերպություններին հետևություն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնությունների բռնություններին, երեխաների վրա դրանց ազդեցություն և նման բռնությունները կանխելու անհրաժեշտություն մասին ընդհանուր հասարակություն իրագեկույթյան և ընկալման մակարդակը քարտուրացնելու նպատակով:

2. Մասնակից պետությունները պետք է սպասնովեն, որ պետք է սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնությունները կանխելու սակա միջոցներին մասին տեղեկատվությունը լայնորեն տարածվի ընդհանուր հասարակություն շրջանում:

[www.coe.int](http://www.coe.int)

Եվրոպայի խորհուրդը մարդու իրավունքները պաշտպանություն հարցերով մայրցամաքի առաջատար կազմակերպությունն է: Այն բաղկացած է 47 անդամ պետություններին, որոնցից 28-ը Եվրոպական միություն անդամներ են: Եվրոպայի խորհրդի բոլոր անդամ պետությունները միացել են Մարդու իրավունքների

